ԳԻՐՔ LXII



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1910 № 3 ՄԱՐՏ

ԹԻՖԼԻՍ

ԷԼԷԿՏՐԱԵԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ ՊՕԼԻՑ. 7.

1910

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչպէս կախուեցի. ուսանողի յուշերից. Ս. Բօճճor. . . 3
*** բանաստ. Յար. Պետրոսեան 8
Մի օր. վէպ. Արսէն 9
Մելքիսդեկ աե. Մուրատեանի նամակներ 18
Իմ ցաւը, բանաստ. Յար. Պետրոսեան 21
Տ. Յակոբ Գ. Սսեցի. Մաղաքիա աե. Օրմանեան . . . 22
Պատմութիւն Սասանեանց և Իրանի նուաճումը արաբացիներից. (Ա. Կրիմսկու). Մ. Շովրեան 27
Լեգենդներ Քրիստոսի մասին. թարգմ. Արսէն սարկ. եւ Ն. Տէր Մանուէլեան 35
Նորագոյն պատմագիտութիւն Կարլ Լամբրեխտի. Pessimist 43

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

«ւ»-ի և «վ»-ի տեխնիկան։ Գիւս աբ. Աղանեանց . . 53

ԱՄՍՕՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Եպիսկոպոսացուներ։— Խմբագրութեան կողմից։— Լուրեր։ —Նամակ Խմբագրութեան։ 57

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏՊԻՈՒՄ Է

ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ Թ.

Յովսէփ Արղուրեան

ԳԻՐՔ LXII

ՀԱՅԿ

ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1910 № 3 ՄԱՐՏ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ ՊՕԼԻՑ. 7
1910

ԻՆՉՊԷՍ ԿԱԽՈՒԵՑԻ

(Ուսանողի յուշերից)

Այն երեկոյ ես դժբաղդ էի ու լքուած...

Իմ բոլոր յոյսերս, երազներս ու վառ տենչերս խորտակուել ու հանգել էին՝ որպէս վերջալուսի վերջին գունատ շողերը...

Եւ հոգիս այդ աւերմունքի վրայ դառնապէս լալիս էր՝ վշտահարի կոծով։

Մեն-մենակ էի սենեակիս մէջ։ Ժամացոյցը կանգնացրել էի, որ չխանգարի ինձ, իմ միայնութիւնը ցաւիս հետ։

Նստած գրասեղանիս առաջ, մտքերի բեռով ծանրացած գլուխս կախած ցաւոտ կրծքիս՝ մտորում էի իմ վիճակի մասին... և ոչ մի ելք չէի գտնում...

Գնացին, աւաղ, բոլորը գնացին, կորան անյատակ անդունդների մէջ, և՛ երազ, և՛ յոյս, և՛ սէր... էլ չկայ ոչ մի բան, որի համար արժենար ապրել, տանջուել և զգալ...

— Ի՞նչի համար ապրել, մտածում էի,— ի՞նչ կայ այս նզովուած աշխարհում... իզուր ինչո՞ւ տառապել, ինչո՞ւ չարչարուել ու տանջուել, երբ փայլուն երազներս ու փայփայած իղձերս չեն կատարուելու, չեն իրականանալու։

Աչքիս առաջով անցնում էին՝ համալսարանը, պրոֆեսորները, ուսանող ընկերներս և մայրաքաղաքի աղմկոտ կեանքը իր լաւ ու վատ կողմերով։ Մի տարի միայն տեսայ համալսարանը և նրա ինձ համար սուրբ պատերի մէջ՝ մի տարի միայն լսեցի դասախօսութիւններ. երկրորդ տարին չէր յաջողւում ինձ նորից մտնել այդ տաճարի շէնքը։

Միակ արգելքը՝ նիւթականի պակասութիւնն էր։
Եւ ես դժբաղդ էի ու խեղճ...
Գլուխս ափերիս մէջ առած, երկար-երկար մտածում էի։
Ճար չկար...

Մտածելուց գանգս տրաքում էր. քունքերս ուռել էին ու բորբոքուել։ Ի՞նչ անէի, ուրիշ ելք չկար... Առաջ քաշեցի մի փոքրիկ կտոր թուղթ, վրան մի քանի տող բան գրեցի և դրի ծոցագրպանս։

Քիչ յետոյ ելայ նստածս տեղից, մի հայեացքով նայեցի սենեակին, առարկաներին և իմ հաստափոր գրքերին, որոնց վրայ այնքան անքուն գիշերներ էի լուսացրել։ Նայեցի ու թղթէ փաթաթը վերցնելով դուրս եկայ սենեակից, աստիճաններով զգոյշ իջայ ցած և կամացուկ մըտայ պարտէզ...

—

Կէս գիշեր էր. թնթև քամին փչում էր մեղմ սլսլոցով, մտնում ծառերի տերևների մէջ և մի ընդհանուր խուլ շշուկ բարձրացնում։ Հորիզոնը ծածկուած էր միապաղաղ գորշ ամպերով։ Երբեմն ծառերից մի հատիկ վաղաժամ ծերացած տերև ֆրֆրալով ընկնում էր գետին ու լռում։

Անցայ ծառերի արանքով, մօտեցայ իմ սիրած հաստ խնձորենուն և կանգնեցի նրա տակ։ Նա ինչպէս միշտ, այժմ էլ կռացած էր պտուղների բեռի ծանրութիւնից. նրա տերևները մեղմ սւսւում էին և միւս ծառերին իմ մասին ինչ որ գաղտնիք փսփսում։ Թւում էր, որ նա հասկանում է ինձ, գիտէ իմ դիտաւորութիւնս և թոյլ չի տայ իրագործելու այն։

Շարժուեցի, պարանը գցեցի հաստ ճիւղից և սկսեցի արագ-արագ կապել, որքան կարելի է ամուր։

Գլխիս մէջ քաոս էր. մտքերը խենթ ժխորով շարունակ դառնում էին գանգիս մէջ. աշխատում էի չմտածել. բայց չեղաւ, ակամայ անձնատուր եղայ։ Ես մտածումէի, թէ ինչպէս վաղը առաւօտեան մայրս, որ սովոր էր շուտ

վեր կենալ և պարտէզ մտնել, կգայ պարտէզ, կշրջի մի փոքր և կսկսի թափուած պտուղները հաւաքել կողովի մէջ. կարմիր խնձորներից մի քանիսը առանձին կվերցնի ինձ համար, ինչպէս անում էր միշտ, որ ես թէյից առաջ ուտեմ։ Յետոյ այդպէս հաւաքելով կհասնի մեծ խնձորենուն և... կտեսնի ինձ կախուած... Զարդանդից մի վայրկեան կը քարանայ, աչքերը կչռի և... ուշաթափ կընկնի գետին կանաչների վրայ...

Այդ րոպէին ես երևակայում էի ինձ կախուած ծառի ճիւղից։

«Այնուհետև կգայ քոյրս, որ մօրս օգնի պտուղները հաւաքելուն, շարունակում էի ակամայ մտածել. նա ինձ չի նկատի, միայն կտեսնի, որ մայրս ընկած է գետնին... ճիչ արձակելով ետ կփախչի տուն, գոռալով, լքլքալով կիմացնի հօրս... Եւ հայրս, եղբայրս ու բոլոր մեր տանեցիք սարսափած կթափուեն պարտէզ տեսնելու թէ ինչ է եղել... և ինչ կտեսնեն... կտեսնեն, որ ես կախուած եմ. լեզուս արիւնի փրփուրով ծածկուած դուրս է եկել ատամներիս շարքերից՝ կախ ընկել և աչքերս ճոթռուել...

Յանկարծ ծառը խշշաց. երկու խնձոր միասին պոկուելով ընկան ցած. մէկը գլորուեց, իսկ միւսը մնաց տեղն ու տեղը։ Ես պարանը նորից ամրացրի...

«—Այդ բանը կտարածուի ամեն տեղ։ Ընկերներս, բարեկամներս, բոլորը կիմանան ու կհաւաքուեն գլխիս... կվշվշան, կափսոսան և հետաքրքրած տխուր դէմքերով հարց կտան իրար.

—Ի՞նչից ստիպուած է այդպէս արել։

—Պատճառը ի՞նչ է։

Եւ կստանան պատասխան.

—Չենք իմանում։—Ո՞վ գիտի...

«—Լրագիրներում նոյնպէս կգրեն այդ մասին, որ այս ինչը՝ Ֆլան Ֆստանովը խեղդամահ է եղել, իրան ծառից կախելով։ Թողել է մի թուղթ, որի վրայ գրել է հետևեալը.

«Կեանքը անիծուած է, ձանձրացայ նրանից և չուզեցայ ապրել»։

Հեռու քաղաքներում ընկերներս կկարդան և ապշութիւնից կքարանան։ Ապա ամենքը մի մի ցաւակցական նամակ կգրեն ծնողներիս՝ մխիթարելու համար...

Մտքերիս թելը կտրուեց այստեղ. հեռու ծառերի արանքում մի շշնջոց լսուեց. ինձ թուաց թէ մեր տանիցը մարդ է դուրս եկել նկատել, հասկացել են միտքս և հետևում են... Կռացայ, ուշադրութեամբ նայեցի շուրջս— ոչ ոք չկար. մի ինչ որ շուն էր, թռաւ, անցաւ ցանկապատի վրայից և կորաւ։ Կրկին տիրեց խորհրդաւոր լռութիւն։ Բայց յանկարծ բոլոր ծառերը միասին փսփսացին. թուաց թէ նրանք լրտեսում էին ինձ և հիմա խօսում ու բամբասում են իմ մասին...

«—Ինձ կդնեն դագաղ, կաշխատեն կախուած լեզուս տեղաւորեցնել բերնիս մէջ, բայց չի յաջողուի, այդպէս էլ կմնայ... Բաւական լաց կլինին վրաս և կտանեն թաղելու. անկասկած ընկերներս կվերցնեն դագաղս. դուցէ պսակ էլ դնեն... Կհասցնեն փոսի մօտ ու վայր կդնեն... ընկերներիցս մի քանիսը ճառ կկխօսեն, կդրուատեն ինձ որպէս բարի, ազնիւ երիտասարդի... Ու թաղելուց յետոյ յուղարկաւորները կցրուին. դարձեալ նրանք կհետաքրքրուին թէ ինչո՞ւ այդպէս արի. ոչինչ պատասխան չեն գտնի։ Բոլորի միտքը կանգ կառնի այդ առեղծուածի առաջ...

—Ինչ ուզում է թող լինի նրանց միտքը, շշնջացի չորացած շրթունքներովս։ Եւ պարանը նորից ու նորից ամուր կապեցի, որ չբացուի։—Բայց վերջը, վերջը ինչ կասեն, անցաւ մտքովս յանկարծ և այդ ժամանակ միտքս ընկաւ չորս ամիս առաջ ինքնասպան եղած մի երիտասարդ, որ թունաւորել էր իրան։ Նրա մահից յետոյ հասարակական կարծիքը շատ վատ էր, մինչև անգամ՝ սոսկալի։ Նրան դատափետում էին, վախկոտ, թոյլ անուանում. նոյն իսկ մարդիկ հայհոյում էին, կանայք անիծում, որ վատ օրինակ է դառնում ուրիշների համար։ Երիտասարդները

անողորմ կերպով քննադատում էին և այն եզրակացութեանը հասնում այդ ընդհանուր կարծիքներից, որ նա կեանքի գոռ կռուի մէջ եղել է թոյլ, անզօր, վատարի... և այլն և այլն։

—Նոյնը կասեն և իմ մասին, անցաւ ուղեղովս ինչպէս կայծակը մութ ամպերի միջով։—Թող ինչ ուզում են ասեն... Ոչ, ոչ, մեռնելուց յետոյ էլ անուն հարկաւոր է, յանկարծ կենդանի խօսքերով բարձր արտասանեցի ես. և չհասկացայ թէ ինչ եղաւ ինձ, որ այդպէս յեղաշրջուեցի մի րոպէի մէջ։—Ես անզօր, թոյլ չեմ, ասացի ոգևորուած.—Մինթէ չեմ կարող մարդկանց օգտակար լինել մի որևէ բանով...

Այս ասելով քաշեցի պարանը, ետ արի և դէն շպրտեցի։

Այդ ժամանակ ծառերը ասես խօսքը մէկ արած մի անգամից ոգևորուած բարձր շշնջիւն բարձրացրին. բարդիների տերևները ճքճքացին հրաշալի կերպով, և ես կարծես վերածնուած, թեթևացած մի ինչ որ ծանր բեռից՝ առաջ քայլեցի, բարձրացայ աստիճաններով, որոնց յաւէտ հրաժեշտ էի տուել. մտայ սենեակս, հանգցրած լամպս վառեցի և թէև ուշ գիշեր էր՝ սկսեցի այս դէպքը գրել յուշատետրիս մէջ։

Սեպտեմբերը եկաւ, ես թողի համալսարան գնալու մտադրութիւնս և մեր գիւղում ստանձնեցի ուսուցչի պաշտօն։ Ծառայեցի երկու տարի և մի գումար հաւաքելով նորից գնացի շարունակելու...։

Ս. ՌօՖՖօr.

***

Հէյ ջա՜ն, զարո՛ւն, վառ ու սիրուն,
Նուռ ու անուռ ծաղկունքով
Թռար հասար դու մեր աշխարհ
Սիրուն, անհուն երկնքով:

Հազա՛ր բարի, մեր աշխարհի
Ճանաչ կանաչ, ջա՛ն զարուն,
Ա՜խ մեր մատաղ սրտերը դաղ
Շատ տանջուեցան քո սիրուց...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՄԻ ՕՐ [1]

VI

Երկչոտ էի և վաւաշոտ։

Գաղափարով ոգևորուած մարդիկ շատ անգամ երեխայի տպաւորութիւն են անում։ Այդպիսի մի երեխայ էի դարձել և ես։ Գրեթէ ամբողջովին նուիրուել էի իդէալիս—պատրաստուել, կատարելագործուել, ազատուել։ Հաւատացած էի, որ վերջապէս ինձ կյաջողուի նպատակիս, ըղձիս հասնել, ցանկալի միտքս իրագործել։ Եւ աշխատում էի։

Կամքս չկարողացաւ կրթել։ Ես յուսով էի հրաշքից յետոյ ինձ տեսնել փրկուած իմ ամենամեծ ախտերից՝ վաւաշոտութիւնից և երկչոտութիւնից։ Համոզուած էի, որ զօրեղ կամքը յետ կմղէր այդ զզուելի թերութիւնները։ Իզուր։ Կամքս չառողջացաւ։ Հոգեկան զօրեղ արատներս մնացին չամրոցուած, չշտկուած։

Թուլասիրտ էի։ Եւ ինչ միջոցների էի դիմում այդ տխուր ախտից ազատուելու համար։—Ամպամած մութ ու մռայլ գիշերներին դուրս էի գալիս քաղաքից, հեռանում։ Չէի նայում ոչ ցերտին, ոչ բքին։ Նպատակս սրբագործել էր միջոցը։ Ինձ համար այդպիսի գործերը պաշտամունքի առարկայ էին դարձել։ Իմ մեծ, մեծ նպատակիս կարապետներն էին դրանք։

Եւ այսպէս մի շարք սուրբ միջոցներ։

Այնքան երկչոտութիւնը—երկչոտութիւն՝ հզօրների առաջ—չէր տանջում ինձ, որքան կրքոտութիւնը, կնասիրութիւնը։ Կրքերը անսանձ էին, բռնակալ և տիրապետող։ Նրանց սանձելու համար բաւական մեծ ոյժ էր պէտք։ Ես մեծ մարդ կլինէի, եթէ կարողանայի սանձել ինձ. բայց ինքս էլ շատ լաւ գիտէի, որ փոքր մարդ եմ ցանկութիւններիս, հաճոյքներիս և աղտեղի խոհերիս գերի մի չնչին թիւն։

Կրքերի, զգացմունքների մի լիառատ պաշար ունէի ես։ Ինչպէս որ լեցուն բաժակից հեղուկը ամենաչնչին դրդումից անգամ դուրս է թափւում, այնպէս էլ կրքերս, զգացմունքներս դրդիչի էին սպասում արտայայտուելու համար։ Մի փոքր, աննշան շար-

[1]) Լումայ 1910 № 2.

ժառիթ—և նրանք երևան էին գալիս գարշանք ազդելու թէ հեղինակի և թէ ուրիշների վրայ։ Ինքս էլ զզւում, գարշում էի իմ աղատոտ զգացմունքներից, կրքերից, բայց անկարող էի նրանց զսպել, սանձահարել։

Ամեն մի հայեացք, ամեն մի կանացի ձայն ինձ դիւթում, կաշկանդում էր։ Երբեմն նայուածքս նետում էի որևէ՝ հանդիպող կամ դիմացս նստած՝ կնոջ դէմքին և երկար ու երկար, ապուշօրէն աչքերս չէի կարողանում հեռացնել, մինչև որ դէմքը չէին շրջում ինձանից։ Գիտէի որ անքաղաքավարութիւն, ռամիկ, կոպիտ արարք է այդ։ Ստիպում էի ինձ հայեացքս, գլուխս շրջել, կնոջ դէմքն աղատեմ կրքոտ նայուածքից։ Բայց իզուր։ Կրքերն աւելի զօրեղ էին, քան թոյլ հրամաններս։ Նրանք ոյժ էին ներկայացնում, սուր, պսպղուն զէնքերով, իսկ ես նրանց դէմ կուում էի բթացած, գօսացած բանականութեամբ, նուաղկոտ և դիւրաբորբոք նեարդերով։ Իմ ջղային սիստեմը չէր կառավարւում բանականութեամբ, մտքով։ Եթէ այդպէս լինէր՝ ես առաքինի կը լինէի։ Նա ղեկավարւում էր կրքերի օլիգարխիայով։ Եւ իմ խեղճ ու կրակ միտքը, բանականութիւնը վէս օլիգարխիայի դէմ երկարաձիգ աննշան ճիգերից յետոյ հրատարակում էր իրան հպատակ, հլու։

Նոր միջավայրում վճռեցի կանանց հասարակութիւնից խոյտալ։ Այդ սուրբ միջոցին հաւատարիմ մնացի միայն կարճ ժամանակ։ Ես հասկացայ, որ սարդի ոստայն ընկած ճանճի դեր եմ յանձն առել, արիւնս վերջ ի վերջոյ պիտի ծծեն։ Եւ իրաք.հոգիս ենթարկուեց մի նոր բռնութեան։ Նոր սարդը երևակայութիւնս էր։ Վերջինս քշում էր ինձ դէպի այն շրջապատը, որից խոյս էի տուել։ Հանգիստ նստած պարապում եմ։ Իսկոյն տեսար գիրքը ձեռքիցս ընկաւ և հայեացքս ուղղուեց դէպի դուրս, պատշգամբի առաջ կանգնած բարդիներից մէկի սաղարթին։ Ամբողջապէս համակւում եմ կրքով։ Ծառը փոխակերպում էի երևակայօրէն հազար ու մի պատկերների, իմ ծանօթ դէմքերի։ Կանացի բոլոր հրապոյրները մերկանում էին իմ առաջ։ Ես տեսնում էի ինձ թովիչ գրկի մէջ պարկած։ Տեսնում էի վզիս փաթաթուած քնքոյշ բազուկներ։ Անմնազդուելի հեշտասիրական տեսարաններ պատկերանում էին իմ առաջ։ Մերկ կինը խեղդում էր ինձ, ճակատս պատում էին սառնորակ քրտինքի աղի կայլակները։ Ազատուելու հնար չկայ... Անցնում է մի քանի վայրկեան, ես անշնչացած ընկնում եմ գետնի վրայ։ Այդ մաշիչ ախտից ես չկարողացայ փրկուել և մնացի ընդ միշտ տոփական պիղծ մտածութեան և երևակայութեան տէր մտաւոր անառակ, միևնոյն ժամանակ համոզուած լինելով և շատ

լաւ գիտակցելով, որ այդպիսի կեղտոտ մտածումները հոգուս համար նոյնքան թունալից և կործանիչ դեղեր են, որքան ծխախոտը և ոգելից խմիչքները մարմնիս համար։ Այսօրինակ դառն, խոշտանգիչ փորձերից յետոյ երբեմն վրաս գալիս էր յուսահատութեան մղձաւանջը ճնշում գործ դնելու։ Ես բոլորովին յուսահատւում էի, կորցնում իմ փրկութեան և կատարելագործութեան յոյսը, յատկապէս շեշտելով իմ եղծուած բնութիւնը բարոյապէս վերածնելու անձնական անընդունակութիւնս։ Այդպիսի նեղ բոպէներին ինձ համարում էի մի բջիջ՝ հասարակական հսկայական օրգանիզմի մէջ, մի չնչին հիւլէ, մի աննշան ատոմ հանքային խոշոր, վիթխարի բեկորի կազմի մէջ։ Ի՞նչ կը կորցնէ հասարակութիւնը, եթէ նրա բջիջներից մէկը հիւանդ է, փչացած է և անպէտք։ Ի՞նչ կպակսի հանքային բեկորից, եթէ նրանից պոկեն և դէն շպրտեն մի փոքրութեան պատճառով անտեսանելի ատոմ։ Գրեթէ ոչինչ։ Ուրեմն էլ ինչու ամբողջ ժամանակ տենդային լարուածութեամբ ձգտել, յուսալ և տնքալ։ Էլ ինչու երազել կատարեալ ատոմ, հասարակական առողջ բջիջ լինելու, քանի որ այն, չնչին հիւլէն, հասարակական կազմուածքի մէջ լինի չլինի համարեա թէ միևնոյն է։ Երբեմն էլ ուզում էի փիլիսոփայական խորհրդածութիւններով մեղմել վրդովուած սիրտս, յուսահատ ու մորմոքուած գիտակցութիւնս։—Եթէ ես մի բան չեմ ցանկանում, ասում էի ես, ո՞վ կարող է ինձ հարկադրել, որ ցանկանամ։ Եթէ ես չունիմ մէջս պարտքի զգացում, պարտականութեան գիտակցութիւն այս կամ այն բանը կատարելու համար, ո՞վ կարող է ինձ ստիպել, որ այս կամ այն պարտքի կատարումն ուսերիս վրայ առնեմ։ Եւ հնարաւոր է մի թուլամորթ մարդու նոյնքան թոյլ վզին փաթաթել գործիչի հսկայական պարտականութիւններ։ Մի մարդու, որ չի կարող զով շատրուանի ցայտացրիւ հոսանքի նման դէպի վեր սլանալ, վերանալ նաև այն ժամանակ, քամին փշուր փշուր է անում ցայտուն հոսանքը։ Ես խօլական քամու դէմ մարտնչող շատրուան չեմ, այլ հովտում խեղդուկ ձայնով հոսող առուակ, որ չի կարող բարձրացայտ հոսանքներ արձակել։ Ո՞վ կարող է ինձ հրամայել, ասելով՝ գործիր, ձգտիր, բարձրացիր։ Գործե՞լ—և ինչու համար։ Ցառաջ քան գործելը ինձ համար պարզ պէտք է լինի այդ գործունէութեան նպատակը, վախճանական կէտը։ Ինչու՞ պէտք է գործեմ, աշխատեմ,—ահա՛ հարցը։ Եթէ այս խնդիրը չլուծուի, ոչինչ չի կարելի անել։ Գործեմ, ժողովրդի երջանկութե՞ան համար։ Սակայն ի՞նչ գործ ունեմ ժողովրդի, հասարակութեան հետ. հասարակական երջանկութիւն։—ինձ ի՞նչ։ Գուցէ պէտք է գործեմ փառքի՞ համար։ Լաւ։ Ենթադրենք այնպիսի մի փառք ստեղծեցի, որով սկսեցի

մրցել Նապոլէոնի, Բայրընի համաշխարհային հռչակի հետ։ Որ ինչ։ Դրանից ինչ դուրս կգայ։ Եւ դա մի յիմար սնապարծութիւն չէ, ինչ է։

Երբեմնապէս այսպէս էի խորհում նոր կարդացած գրքերի զօրեղ ազդեցութեան տակ։ Սակայն այդ բոլոր մտածումները սոսկ մտածումներ էլ մնում էին, և ես շարունակում էի իմ նախկին ճիգն ու ջանքը կատարելագործուելու և պատրաստուելու համար։ Հիւլէի և բջիջի նշանակութեան հասկացողութիւնից յետոյ, շատ լաւ ըմբռնում էի և այն, որ մի քոսոտ ոչխար կարող է վարակել մի ամբողջ հօտ։

VII

Հոգիս դեռ մանկութիւնից էին փչացրել։

Միայն մեր սեփական ընտանիքը, իմ հայրական աունը չէր ինձ հարուած հասցրել, ֆիզիքապէս և բարոյապէս այլանդակել։ Կար և մի այլ ընտանիք, որ իմ անկման գործին ամենազօրեղ կերպով նպաստել էր։ Հօրեղբօրս ընտանիքն էր դա։

Երկու հոգուց էր բաղկացած այդ ընտանիքը։ Այր ու կին։ Հօրեղբայրս մի տարօրինակ բնաւորութեան տէր մարդ էր։ Խիստ կատակող, անհոգ և անտարբեր դէպի աշխարհն ու մարդիկ։ Ո՛չ մէկին չէր սիրում. նրան ամեն ինչ ատելի էր, ամեն ինչ զզուանք ու ձանձրոյթ էր յարուցանում։ Նա ծաղրում էր անխնայ։ Ո՛չ մի սրբութիւն չէր ճանաչում։ Ոտնատակ էր տալիս այն բոլորը, ինչ ուրիշների համար պաշտամունքի և յարգանքի առարկայ էր։ Երիտասարդ հասակում նաւթային քաղաքը հրապուրել էր նրան ոսկով։ Հայրենի քաղաքից դիմել էր այդտեղ և մեծ կարողութիւն էր ձեռք բերել, ապրելով մի կարգ փողատէր, հարուստ երիտասարդների փչացած, զեղխ ու անբարոյ կեանքով։ Ապագան նիւթականի կողմից ապահովելուց յետոյ, նա վերադարձաւ հայրենիք, աւելի ճիշտ ասեմ՝ բժիշկները խորհուրդ տուին կամ ստիպեցին այդպէս վարուելու։ Անառակ կեանքը նրա հոգեկան կազմը փչացնելով, ֆիզիքապէս ախտաւոր էր դարձել։ Մի քանի բժիշկներ գուշակել էին վերահաս վտանգ—մահ։ Սակայն հայրենիքի կլիման օգնեց նրան. մասամբ առողջացաւ։ Հակառակ մի քանի բարեմիտ մարդկանց խորհրդին, որոնք նրան շատ լաւ էին ճանաչում, ամուսնացաւ։ Կնոջ հետ ապրեց ամբողջ քսան տարի։ Զաւակ չունեցաւ։ Տառապում էր ներքին հիւանդութիւններով։

Նրա կինը տարաբախտ կանանց շարքին էր պատկանում։ Ծնողները նրան գրեթէ ոյժով էին ամուսնացրել։ Լսած լինելով

իւր ապագայ ամուսնու անուղղայ ընթացքի մասին, որ ամենագլխաւորն է՝ ֆիզիքական նողկանք տածելով դէպի նա, չէր կամեցել ամուսնանալ։ Սակայն հայրը և մայրը ստիպեցին։ Աղջիկը մի զարմանալի գեղեցկուհի էր։ Շատերն էին նրա ձեռքը խնդրել։ Բագուից վերադարձած Կրեսոսն ևս աչք տնկեց նրա վրայ և առանց արգելքների ու խոչնդոտների առաջ կանգնելու՝ ամենահեշտ ճանապարհով հասաւ իւր նպատակին։ Տեղեկացաւ աղջկայ հոր անապահով, նիւթական տեսակէտից աննախանձելի վիճակի մասին և մի մեծ գումարով ճանկը ձգեց առաջնակարգ հրեշտակին»։

Ի՞նչ պէտք է լինէր այս տեսակ ամուսնութեան հետևանքը։ Պարզ է։ Կինը սարսափելի կերպով ատում էր ամուսնուն։ Ֆիզիքական զզուանքը միացած ամուսնու բարոյական այլանդակութիւնների մասին ունեցած գաղափարի հետ՝ կնոջ առջև մի անդունդ էին բացել, որով նա չէր կարող անցնել — ամուսնուն սիրել։ Նրա անունն անգամ գարշանք էր ազդում բռնութեամբ ամուսնացրած կնոջը։ Չկարողացաւ բացարձակապէս կռուել ամուսնու և նրա ընթացքի դէմ։ Շրջապատի կեանքը նրան գրաւեց, հզօրապէս ներգործեց։ Եւ նա սկսեց ուրիշների պէս ապրել։ Կեանք էր վարում ամուսնու փողով, անուանապէս իւր ամուսնու սեփականութիւնն էր, սակայն ուրիշներին էր պատկանում թէ հոգով և թէ մարմնով։ Նա խաբում էր ամուսնուն, վերին աստիճանի անհաւատարիմ էր։ Հօրեղբայրս կնոջ վրայ այնքան էլ ուշադրութիւն չէր դարձնում։ Մինչև անգամ, եթէ սուրը էլ լինէր, ինչպէս ասում էր, նա չէր կարող հաւատալ կին արարածին։ Նա սոսկալի կերպով ատում էր ընդհանրապէս կանանց վարք ու բարքը, հոգին ու հակումները։ Նա կանանց մարմինն էր սիրում, իսկ այդ մարմինը նրան չէին մերժում։ Եւ նա գոհ էր, որ կինը չէր պատճառում նրա ճահճացած կենցաղին որևէ զգալի վնաս, յուզում։ Իսկ «մանր-մունր» դէպքերը, անպատեհութիւնները, ինչպէս գիշերները տուն չգալ, մեծածախս խնջոյքներ, բազմաթիւ ծառաներ, արդուզարդի ահագին մսխում,—այդ բոլորը և դրա հետ շատ ուրիշները նա համարում էր կնոջ «առաջին երիտասարդութեան սխալներից»։ Յոյս ունէր, որ կնոջ «փուքը շուտով կիջնի»։

Կինը բոլորովին ազատ էր։ Կարող էր ապրել այնպէս, ինչպէս ուզում էր։ Նրա առաջ խոչնդոտներ չէին դնում։ Հիւանդոտ ամուսինը խօսք անգամ բաց չէր անում նրա ընթացքի մասին։ Նա պատճառներ ունէր վախենալու։ Նա կենսասէր մէկն էր, որ իւր անտարբեր բնաւորութեամբ հանդերձ՝ կեանքի վայելչութիւնները դժուարութեամբ ձեռքից բաց կթողնէր։ Այսպիսի մի ամուսին ունենալով, հասկանալի է, թէ ինչպէս մի կին,—որ ատում է

բոլոր սրտով ամուսնուն և որի հետ բոնազբօսիկ կերպով է ամուսնացել,—սանձարձակ և լկտի կենցաղ է սկսում վարել։ Ուշադրութիւն ամենին չէր դարձնում «մարդկանց հնարած բարոյական կապերին»։ Ի՞նչ ազգական, ի՞նչ բարեկամ։ Նրան երիտասարդ, թարմ, աշխոյժ մարմին էր հարկաւոր, սիրող ու կրակոտ սիրտ։

Բախտի բերմունքով այդ հրէշացած կինը, որ գուցէ աւելի նպաստաւոր պայմաններում լաւ կին և ընդունակ մայր լինէր, շատ վաղուց սկսել էր յանցաւոր սէր տածել դէպի ինձ, դէպի իւր ամուսնու տակաւին աշակերտ եղբօրորդին։ Միջոցներ ձեռք առաւ և ինձ, կրքոտ երիտասարդիս, 17—18 տարեկան հասակում ձգեց իւր լարած որոգայթի մէջ, որտեղից չկարողացայ դուրս գալ մինչև որ հայրենի քաղաքից խուսափեցի, զզուած լինելով թէ հօրս, թէ կրտսեր եղբօրս, թէ քոյրերիս և թէ գլխաւորապէս իմ անձնական արարքներից։ Ես խորապէս զգում էի, թէ ինչպէս հալւում-մաշւում եմ, օրէցօր հիւծւում, դալկանում՝ տալ իքով ինձանից մեծ մի կնոջ հետ մօտիկ յարաբերութիւնների մէջ մնալով։ Բարոյական գիտակցութիւնս, երբ զարթնեց իմ մէջ, երբ տեսայ, որ անպատկառօրէն պղծում եմ իմ հարազատ հօրեղբօրս, արիւնակից ազգականիս անկողինը—արդէն ուշ էր, ես տարուել էի կրքերով, կնոջ հրապոյրները լռեցնում էին իմ մէջ, իմ հոգու խորքերում բողոքող ներքին յանդիմանութիւնները։ Այս վերջինների ազդեցութեան տակ ինձ կորած էի համարում, միևնոյն ժամանակ խոստովանելով, որ ինքս անձամբ անկարող եմ դուրս գալ հոգուս վրայ ծանրացած զօրութեան ճնշումից։ Զգում էի, որ փըչանում եմ, հիւծւում և կեանքի համար անժամանակ անպէտքանում։ Ես համարում էի ինձ վարակուած ներքին փտութեամբ գարշութեամբ և ցեխով։ Պարզ տեսնում էի կորստեան անդունդը ոտքերիս առաջ բաց։ Ես, լինում էր բոպէներ, համարում էի ինձ մի գերեզման, որ արտաքուստ է միայն գեղեցիկ, աչք և հայեացք գրաւող, բայց ներքուստ լիքն է անմաքրութիւններով և զեռուններով։ Արարքներիս ամբողջ վատութիւնը գիտակցելով հանդերձ՝ ես մինչև վերջը մնացի հաճոյքներիս և կրքերիս ձեռքին խաղալիք, չկարողանալով երբեք ազատուել նրանց կախարդիչ հմայութիւններից։

VIII

Իմ կատարելագործութեան ձգտումների և իդէալիս համար ունէի արդարացուցիչ պատճառներ։ Դրանցից մէկն այն ընտա-

նիքն էր, որից դուրս էի եկել և որի դէմ պայքարել էի ուզում։ Սակայն այդ դրդիչը դեռ բաւական չէր։ Բացի այդ՝ ունէի և երկու խոշոր պատճառ, շարժառիթ, որ իմ աչքերից քունը փախցրել էին և անդադրում ստիպում էին ինձ՝ հոգալու հոգեկան շինուածքիս և կենցաղիս բարեշրջելու մասին։

Դոքա ինձ համար երկու շարժիչ գործօններ էին։

Ունէի մի ընկեր, որի հետ կապուած էի դպրոցական շրջանից։ Արմայիս Ռուբէնեան էր անունը։ Դա մի խելացի, ժիր, տոկուն և մաքառող բնաւորութիւն էր, մի անվերջ եռանդի տէր երիտասարդ։ Աւարտել էր միջնակարգ դպրոց և ապա լսել էր գիւղատնտեսական դասախօսութիւններ։ Ինքնակրթութեան օգնութեամբ բաւական մեծ մտաւոր պաշար էր ձեռք բերել և քաշուել հայրենի քաղաքի մոտակայ գիւղերից մէկը։ Ամուսնացել էր և գիւղի ուսուցչի հետ ձեռք ձեռքի տուած գործում էին։ Նամակների մէջ Արմայիսը սկզբում գանգատւում էր իւր վիճակից, սակայն ոչ թէ մ.կին կամ միւսին մեղադրելու դիտումով, այլ իւր անփորձութիւնն էր պախարակում և վրդովւում, որ քաղաքային կենցաղը զրկել էր նրան ժողովրդի ոգին թափանցելու և նրան բան հասկացնելու այն յատկութիւնից, որ միայն ձեռք է բերւում ժողովրդի հետ երկար ապրելով, հետը շփուելով և նրա կացութիւնը խոր ու բազմակողմանի ուսումնասիրելուց յետոյ։ Անցաւ մի քանի տարի և նրա գրութիւնների մէջ արտափայլում էր մի ոգևորուած ժողովրդական եռանդոտ ու յուսալից գործիչ։ Արմայիս Ռուբէնեանը խօսում էր իբրև մէկը, որ իւր ամբողջ ոյժերը նուիրել էր գաղափարի, գործի։ Նա պաշտում էր ժողովուրդը։ Ուրախ էր, որ առաջին տարուայ լքումն ու յուսահատութիւնը տեղի էին տուել և այժմ նրա մէջ հաստատուել էր մի ջերմ հաւատ դէպի գիւղ և շինականի կեանքի վերանորոգութիւնը։ Թէև նա նամակների մէջ—այդ նամակներից կարելի է մի պատկառելի հատոր կազմել—հանդէս էր գալիս իբրև գործի մարդ, թէև նրա գրութիւնների մէջ թիւր, հաշիւը մեծ տեղ էր բռնում, այնուամենայնիւ այնտեղ կարելի էր տեսնել և ժողովրդի շահերի մոլեռանդ երկրպագուի շատ անգամ խանդավառութեան հասնող սրտագին զեղումները, հոգեկան անձկալից յոյզերը։ Երբեմն նա իւր ոգևորութեամբ տարուելով՝ կոչ էր անում ընկերին դէպի գիւղական հասարակութիւնը իջնելու մասին։ Պարզում ու մեկնում էր գիւղական կեանքի հրապոյրները, թովչալի հրմայքները։ Բացատրում էր բնութեան մէջ ապրողի սրտի ու մտքի թարմութիւնը, հոգեկան թրթիռների ելևէջները։ Խօսում էր այն սիրելի վայելչութիւնների մասին, որ ձեռք է բերում գործիչը,

համոզուած լինելով այն գիտակցութեան մէջ, թէ ինքը գործում է ընդհանրութեան, կարօտողների օգտի և լուսաւորութեան համար։ Անձնական նեղ սահմաններից դուրս նայելով՝ գործիչը դիտում է մի հսկայ, մեծ կեանք, ուր տանջւում և ուրախանում է հողի մարդը։ Շնչում է նրա հետ նոյն օդը, ցաւում է նրա ցաւերով, խնդում նրա վայելքներով։ Եւ որքան քաղցր է այսպէս երջանիկ ապրելը, քանի՞ հրապուրիչ կողմեր ունի իւր մէջ, որքան փափաքելի։

Ինձ շատ էր գրաւում գործիչ ընկերիս եռանդը։ Ես ոգևորւում էի Արմայիսի ծրագիրներով և նրանց եռանդոտ իրագործումով։ Պէտք է խոստովանեմ, որ շատ շուտ ոգևորուել գիտէի. սա իմ էական յատկանիշներից մէկն է։ Միայն և եթ ոգևորուել։ Նամակների ընթերցումից անցնում է մի չնչին ժամանակ և իմ սրտում լռում էին և ոգևորութիւն, և՛ եռանդ, և ծրագիրներ։ Եւ նրանց տեղը բռնում էր մի զարհուրելի սառնութիւն, որ քարացնում էր ամբողջ էութիւնս։

Նախանձում էի Ռուբէնեանի եռանդին, կամքի ոյժին և անսայթաք հետևողականութեան։ Սրտիս խորքում պաշտում էի նրան։ Գիտէի յարգել ընկերիս ինքնավստահութիւնը։ Սակայն արտաքուստ այդպէս չէր։ Ես կծու հեգնութեամբ էի վերաբերում Արմայիսի համարձակ քայլին։ Նրա ականջից հեռու խօսակցութիւնների մէջ «գիւղի ասպետ» ծաղրական մակդիրն էի կպցնում նրա անուան։ Թոյլ ընաւորութեան յատուկ գիծն է—ատել 'ի հարկէ արտաքուստ՝ ինչ սիրում է և ընդհակառակը։

Ո՛չ միայն նախանձում էի ընկերիս անձին, նրա սեփական հոգու պայծառ յատկութիւններին, այլ և այն ընտանիքին, որտեղից ծնուել էր մի այդպիսի անհատ, ամբողջովին գործունէութեան կըրակով վառուած, որի խօսքը և գործը զուգընթաց էին գնում, առանց իրար հակասելու։

Շատ անգամ եմ համեմատութեան մէջ դրել մեր և ընկերիս ընտանիքը։ Դրանիկեանների և Ռուբէնեանների միջև ես միշտ մի սոսկալի անդունդ եմ տեսել։ Անանցանելի, խոր ու մթին ճեղքուածով բաժանուած էին այդ երկու ընտանիքները։ Նրանց միջև կամուրջ ձգելու, հաղորդակցութեան և առնչութեան կէտեր գտնելու համար տրամադիր էի դարձեալ իմ ամենակարող հրաշքին դիմելու։ Մինչև անգամ մի վէպ էլ էի գրել «Եդեմ և Դեհեն» խորագրով, որտեղ ես պարզ գծերով նկարել էի իմ հայրական տունը և նրան ամեն կողմից հակադրել էի ընկերիս ընտանիքը։ Մի օտարոտի և վէպի համար անսովոր յառաջաբան էի կցել այդ գրուածքին, որտեղ հետևեալն էի յայտնում իմ կարծեցեալ ընթեր-

ցողներին. «Թող ընթերցողները չզարմանան, որ այս վէպի մէջ դուրս բերուած ընտանիքները բացարձակապէս հակադրութիւն են կազմում։ Ես երբէք տրամադրութիւն և դիտաւորութիւն չեմ ունեցել հրեշտակ և սատանայ դուրս բերելու։ Ես կեանքի տուած փաստն եմ արձանագրել, համոզուած լինելով, բացառիկ վիճակներ չեմ հանդէս բերում, այլ մեր տխուր կեանքում սովորական դարձած երևոյթներ»։

«Եդեմ և Դեհեն» վէպիս մէջ Դրանիկեանների ընտանիքը ներկայացնելով՝ նրա լոյսի պէս պայծառ էական լնորոշ գծերի նկարագրութիւնը տալով, վերցրել էի մի առ մի այն բոլոր յատկութիւնները, որոնցով օժտուած էր այդ ընտանիքը և ցոյց էի տուել դրա հակատիպարը միւս ընտանիքում։ Իմ այդ արարքը վէպիս վերնագրութիւնը արդարացնում էր։

Մէկ ընտանիքում կեանքն ամեն կողմից գեղեցիկ է, գրաւիչ, բնական։ Միւսում՝ տգեղ, ատելի, շինծու։

Երիտասարդ, թարմ և աշխոյժ երկու հոգիներ սիրել էին միմեանց։ Դրանք իրար համապատասխան բնաւորութեան տէր երկու անհատներ էին, որոնց համար բախտը վիճակել էր ամուսնութեան համակրելի կապերով շաղկապուել։ Եւ շաղկապեց։ Նրանք ամուսնացան և ապրում են ուրախ և երջանիկ կեանքով։ Սէրը միշտ անպակաս է նրանց մէջ։ Այդ սէրն է, որ ամուսնուն կապում է ընտանիքի հետ, նրա առաջ փակելով արտաքին աշխարհի լպիրշ մեղկութիւնները, զզուելի, անառակ կեանքը, վերջինիս կորստաբեր հրապոյրներով։ Սէրն է, որ դեռատի կնոջը միացնում է անքակտելի կապերով ամուսնու վիճակի և բախտի հետ, հեռու պահելով նրան անհաւատարմութեան ախտերից։ Այսպիսի ամուսնութիւնից է ծնւում վէպիս հերոսը, որի ջանքը—ազատել միւս ընտանիքից դուրս եկած մի խեղճ երիտասարդի՝ ապարդիւն է կորչում։

Միւս ընտանիքն այդ կերպ չէր կազմուել։ Փոխադարձ սէր ասուած բանը գոյութիւն չունի։ Երկու անհատների ստիպում են ամուսնանալու։ Ո՛չ տարիքով են միմեանց յարմար, ո՛չ բնաւորութեամբ, ո՛չ ձգտումներով։ Տարիները իրար ետևից անցնում են դժբախտ ընտանիքի վրայով՝ չբերելով նրա համար երջանկութիւն և ուրախութիւն։ Այնտեղ տիրում է մի թշուառ, անխորհուրդ և անմիտ կեանք, որ հետզհետէ կարծրացնում է տան անդամների սրտերը, մտքերը և հոգիները։ Երկուսն էլ, այր ու կին, մարմինների հետ գործ ունեն։ Տղամարդը մի կնասէր, մարմնապաշտ և դիւրաբորբոք խառնուածքի տէր անձն էր։ Կինը գիտէ ամուսնու անզգամ արկածների պատմութիւնը։ Նա տանջւում էր, որ ա-

մուսինը բացի իրանից ուրիշ կանանց էլ ծանօթ է, բայց կռիւ մղելու արիութիւն չունի, ուստի և տանջւում է, տապակուելով իւր սեփական իւղի մէջ։ Նա խեղդւում էր խանդի, մախանքի ճիրանների մէջ։ Իւր տգէտ, կարճ խելքով, անմիտ միամտութեամբ ուզում էր միայն իւր տրամադրութեան տակ տեսնել ուրիշներին ևս պատկանող ամուսնու մարմինը։ Սակայն իզուր։

Ճշտօրէն վէպիս մէջ տուել էի թէ մեր տան և թէ գիւղատնտես Արմայիսի ընտանիքի պատկերը։ «Մաքրեցէք միջավայրը, կրթեցէք կանանց, ասում էի վէպիս հերոսի բերանով, թոյլ տուէք մարդկանց ազատ շնչել, փրկեցէք նրանց անմաքուր կաշկանդումներից, բռնութիւններից—և մենք կունենանք մի առողջ, գործունեայ և պէտքական սերունդ»։

ԱՐՍԷՆ

(Կը շարունակուի)

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԱԵ. ՄՈՒՐԱՏԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐ

1 Դեկտ. 1894

Շնորհամիտ Տ. Դիւտ Բ. Աղանեանց

Շնորհամիտ սիրելի

Մի շատ գեղեցիկ և թանկագին նուէր ղրկած էք ինձ ընթերցասիրելու, այն է Դիւան Հայոց Պատմութեան, Գիրք Գ. Սիմէօն Կաթողիկոսի յիշատակարանը կենսագրութեամբ եւ յաւելուածով ու ծանօթութիւններով։

Մեծ հաճութեամբ կը շարունակեմ ընթերցումս. բայց տակաւին չաւարտած բարւոք կը համարիմ թէ անկեղծ խնդակցութիւնս ու շնորհակալութիւնս յայտնել և թէ առանց դիտողութեան չը թողուլ մի կէտ, որ տխուր տպաւորութիւն ունեցած է վրաս։

Ձեր Յառաջաբանին մէջ արտատպած էք Արծագանքէն մի նշանաւոր անձի քննադատութիւնն, որ ցաւ է ասել թէ աւելի արդար կը բերէ Ձեր հրատարակութեան քան թէ պատիւ։ Այդ նշանաւոր անձն, իւր պատմական սխալ և թեթեւամիտ դատողութեամբ, կ'անուանարկէ ներկայ դարուս ամենէն նշանաւոր և անձնուէր Եկեղեցական Հովուապետն Ներսէս Ե. Աշտարակեցի, որ Հայաստանեայց եկեղեցւոյ անկախութիւնն պաշտպանելու համար թունաւորեցաւ և գրիչ 'ի ձեռին անկաւ իւր գրասեղանին առջև։

Այսպիսի մի նահատակ և անձնադիր Հովուի համար կը գրէ յիշեալ նշանաւոր անձն թէ «Դանիէլ կաթողիկոսն շատ թոյլ կամքի տէր մարդ էր, այդ պատճառաւ զուցէ Ներսէս և Մանուէլ վարդապետների նման կրքոտ... մարդիկ դրան ջերմ կուսակից դարձան, որովհետև նոքա յոյս ունէին նորան իւրեանց ձեռքում գործիք շինել։ Ներսէսն էր և ոչ Դանիէլն որ Սինհոդոս ստեղծեց»։ Մինչդեռ պատմութենէն պարզապէս յայտնի է, որ Ներսէս միայն միաբանական ժողով կազմած է. ինչպէս սովորական է ամեն վանուց համար, և ոչ երբէք սինհոդոս, ինչպէս որ Ներսիսի կազմած կառավարիչ ժողովն միաբանութեան, խանդարուած է Եփրեմ կաթողիկոսի հրաժարումէն և նոյնիսկ Ներսիսի աքսորումէն զկնի։

Նոյն նշանաւոր անձն շատ անհիմն դատողութեամբ ասում է.

«ըստ մեզ օրինաւոր կաթողիկոս պէտք է ճանաչել Դաւթին, որովհետև նա օծումն ընդունեց Ս. Էջմիածնի տաճարում... իսկ Դանիէլն Իւչ Քիլիսէում (Ս. Յովհ. վանքը) յարելով միանգամայն, «ինչպէս որ չենք ընդունիլ այն Ս. Միւռոնը, որ Ս. Էջմիածնում չի լինիլ, եպիսկոպոս չենք ճանաչիլ նորան, որ ս. Էջմիածնում կաթողիկոսից ձեռնադրուած չլինի, այնպէս ևս չենք կարող օրինաւոր ճանաչել այն կաթողիկոսին, որ Ս. Էջմիածնումը օծուած չի եղել»։

Որչափ բաւ, նոյնչափ տգիտութիւն։ Երևի թէ նշանաւոր անձն բոլորովին անգիտակ է Հայոց եկեղեցւոյ պատմութեան և բնաւ ուշադրութիւն դարձուցած չէ, որ Հայոց կաթողիկոսութիւնն, պատմական հանգամանքներէ ստիպուած, դարերով աւելի ուրիշ վանքերու մէջ ապաստանարան ունեցած է քան թէ Էջմիածնում։

Այդ նշանաւոր անձն արդեօք չընդունի՞ր որ Սսոյ և Աղթամարայ կաթողիկոսութիւններն, ինչպէս և իրենց ձեռնադրած եպիսկոպոսներն, Հայոց եկեղեցւոյն կը պատկանին։ Զարմանալի է, որ այդ անձուկ և թափծու հոգւով գրուած քննադատութիւնն մուտ գտած է Ձեր պատմական յոյժ կարևոր Ցիշատակարանի Ցառաջաբանին մէջ։

Նշանաւոր անձն այնչափ յառաջ կ'երթայ, որ կը յանդգնի ասել. «Պէտք է նկատել, որ Ներսէս Արք եպիսկոպոսն կուրացած՝ իւր կրքից և վրէժխնդրութիւնից՝ ԲէսԱրաբիայից խրախուսում էր ըմբոստ միաբանութիւնն, բայց կաթողիկոսն դիմադրում էր... երբ Ներսէս կաթողիկոս կը դառնայ, ոչ միայն իւր ստեղծած Սինոդի միջամտութիւնն կը մերժէ այլ և պալաժենիան»։

Պալաժենիայի և Սինհոդոսի հաստատութեան պատմական ամեն մանրամասնութիւններն հաստատուն փաստերով հրատարակուած են և կը սոսկայ մարդ, երբ կը տեսնէ թէ նշանաւոր անձն այս ամենն անտեսութեան տալով, Ներսիսին կը վերագրէ Սինոդի և Պալաժենիայի ստեղծումն։ Այս մի բացարձակ ըմբոստութիւն է պատմութեան և նոյն իսկ Ներսիսի անձնազոհութեան դէմ, որ դժբաղդաբար իրեն նման յաջորդ չ'ունեցաւ Հայաստանեայց եկեղեցւոյ ազատութիւնն և Հայոց Հայրապետութեան անկախութիւնն պաշտպանելու համար։

Փափագելով 'ի բոլոր սրտէ Ձեր ձեռնարկած շահաւոր գործոյն կատարեալ յաջողութեանն

Մնամ Հայրական սիրով և ողջունիւ

Մելք. Եպ. Մուրատեանց

ԻՄ ՑԱՒԸ·

Ես պահեցի մի գաղտնի ցաւ
Սրտիս խորքում վշտահար·
Եւ նա աճեց ու զարգացաւ
Եւ բռնկուեց բոցավառ:

Ու իմ հոգին այդ հրդեհով
Կրակ կտրեց սանձարձակ,
Շանթ ու կայծով, հրեղէն թափով
Վեր սլացաւ համարձակ:

Յարութիւն Պետրոսեան

Տ. ՅԱԿՈԲ Գ. ՍՍԵՑԻ

201. Յակոբի անունը երբեք յիշատակութեան արժանի բան մը պիտի չունենար, եթէ չհոչակուէր Գրիգոր Տաթևացիի հետ ունեցած թղթակցութեամբը։ Յակոբ յաջորդած է Կարապետի, անոր մահուընէ կամ հեռացումէ ետքը (1408), զօրութեամբ այլազգի ամիրային և միջնորդութեամբ Սսոյ գլխաւորներէն և եպիսկոպոսներէն ոմանց։ Սսեցի կոչուած է նա, որովհետև գործերուն ընթացքէն կը յայտնուի, թէ Սիս քաղաքի բնիկներէն կամ հաստատուն բնակութիւն ունեցողներէն է։ Իւր նախընթացին վրայ բնաւ տեղեկութիւն չունինք։ Իւր կաթողիկոսանալուն հակառակորդներ ալ ունեցած է, սակայն ամիրային պաշտպանութեամբ զօրացուցած է իւր դիրքը, թէպէտև տևական չէ կըրցած ընել, որովհետև հազիւ երկու տարի խռովեալ պաշտօնավարութենէ ետքը, դեղակուր սպանուած է, նոյն իսկ կաթողիկոսարանի միաբաններէն (1411)։ Քաղաքական պարագաներու համեմատութեամբ, Յակոբ Գ.-ի կաթողիկոսութեան տարիները կը պատասխանեն Քարա Եուսուֆի զօրանալուն առաջին օրերուն։ Կիլիկիա համեմատաբար հանդարտ վիճակ ունեցած է այդ միջոցին, որովհետև Քարա Եուսուֆ աւելի արևելեան գաւառներուն մէջ կը կատարէր իւր արշաւանքները։

202. Գրիգոր Տաթևացի, ինչպէս յիշեցինք, Վասպուրականցի վարդապետներուն հրաւէրներով, Վասպուրական եկած էր, իւր ծագման երկիրը (1409)։ Այդ միջոցին ներքին հակառակութիւններ ևս քանդեալ կը պառակտէին Աղթամարի կաթողիկոսութիւնը, որուն գահակալն էր Դաւիթ, Զաքարիա Նահատակի եղբայրը, և որ տասնուվեց տարիէ իվեր պաշտօնի վրայ էր։ Վասպուրականցի վարդապետներէն ոմանք Որոտնեցիին հին աշակերտներէն էին, նշանաւոր խումբով մըն ալ վերջերս Տաթև գացած էին, մեծ վարդապետանոցին սկզբունքները ընտանի դարձած էին Վասպուրականցոց, որոնք յաջողեր էին նոյն իսկ Տաթևի մեծ վարդապետը իրենց մօտ բերել։ Տաթևացին կը գտնուէր Մեծոփայ վանքը։ Այդ ամէն պարագաներու առջև աննշանակ պէտք չէր մնար Աղթամարի աթոռը, որ իբր հակաթոռ հաստատուած էր Գրիգոր Գ. Գահ-

լաւունիի ընտրութեան օրէն (1113), և նզովուած էր Սեաւլեոի ժողովին վճռով (1114)։ Կըսուէր թէ Գրիգոր Ե. Անաւարզեցի (1305). վերուցած էր նզովքը և Աղթամարի աթոռն ու ժողովուրդը հոգևոր կապանքէն արձակած (Կալ. ա. 439), սակայն կերևի թէ Անաւարզեցիին անունին հետ իւր գործն ալ անարժէք էր մնացած, կամ թէ բոլորովին անհիմն զրոյց մըն էր Անաւարզեցիին արձակած լինելը. որ ժամանակակից պատմիչը (Մեծոփ. 52) յայտնապէս կը գրէ, թէ Աղթամար տակաւին հին կաթողիկոսներուն կապանքին ներքև մնացած էր։ Աղթամարի երկպառակութիւններուն մանրամասնութիւնները մեզի չեն հասած, բայց Տաթևացին մեծ նշանակութիւն տուաւ անոնց, և իւր աշակերտակից ու աշակերտ Վասպուրականցի վարդապետներուն հետ մեծահանդէս գումարում մը կազմեց Մեծոփի վանքին մէջ (1409), որ այն ատեն Վասպուրականի կենդրոնն է նկատուած, և մերժելով Դաւիթի կաթողիկոսութիւնը և ընդունելով Յակոբի իրաւասութիւնը, հռչակեց Ամենայն Հայոց աթոռին իշխանութիւնը, և Աղթամարի աթոռին ժողովուրդը կամ Վասպուրականցիները արձակեց հին կապերէն (Մեծոփ. 52)։

203. Որչափ ալ մեծ ըլլայ Տաթևացիին արժանիքը, դիրքն ու կարողութիւնը, սակայն հնար չէ ենթադրել, որ Տաթևացին համարձակած ըլլայ վերցնել ու ջնջել վճիռ մը որ ազգային ժողովով մը դրուած էր, և բազմաթիւ հայրապետներէ հաստատուած, և ոչ ալ կրնայ կարծուիլ թէ Մեծոփի գումարումը իւրովի տուած ըլլայ այդ լուծումը առանց կաթողիկոսական աթոռին մասնակցութեան։ Ինչչափ ալ Սսոյ աթոռը աղաւաղ վիճակի մէջ ինկած էր, և անարժան աթոռակալներ զայն գրաւած էին, սակայն այն չէր դադարած Ամենայն Հայոց կաթողիկոսութեան շարունակութիւնն ըլլալէ, որ է ըսել, գերագոյն իրաւասութեան տէրն ըլլալէ։ Այդ տեսութեամբ, նոյն ինքն Տաթևացի մեծ վարդապետը, Աղթամարի ժողովուրդին արձակումն ու Աղթամարի աթոռին կացութիւնն, օրինաւորութեան վիճակի վերածելու համար, դիմած է Սսոյ Յակոբ կաթողիկոսին, յատուկ ու պատուադիր նամակով մը, զոր պահած է Մեծոփեցին (Զամ. Գ. 456), յորում կը զեկուցանէ, թէ Աղթամարի աթոռը ներքին պառակտումներով քանդուած է, թէ ինքն ալ զայն պաշտօնապէս հռչակած է, և թէ յատուկ շրջաբերական թղթով հրատարակած է զայդ Աղթամարի սահմաններուն մէջ և արտաքոյ, և կը խնդրէ որ կաթողիկոսական իշխանութեամբ այդ գործողութիւնները հաստատէ։ Նոյն գրութեամբ կը հաստատէ, թէ Աղթամարի հպատակութենէն երեք գաւառներ կը սպասեն որ իրմէ ձեռնադրուած եպիսկոպոս և իրմէ օրհնուած մեռոն

ստանան, և կը վստահացնէ որ ուրիշ գաւառներու վրայ ալ կը տարածուի այդ երեք գաւառներուն օրինակը, և գլխաւորապէս Ոստան գաւառին վրայ, որ տակաւին հաւատարիմ կը մնայ Դաւիթին ու Աղթամարին։ Երեք գաւառներէն մէկը հարկաւ Արճէշն է կամ Քաջբերունեաց գաւառը, ուր կը գտնուէր Տաթեւացին. միւս երկուքներէն մէկն ալ հաւանաբար Վանն է, թէպէտև երեքին ալ անունները յիշուած չեն։ Տաթեւացիին կատարած գործին գլխաւոր հետեւանքն եղաւ Աղթամարի իրաւասութեան սահմաններն ամփոփել, այժմ ալ Վասպուրականի կողմէն կը փակուի Ոստանով, որ է Ռշտունեաց գաւառ։ Իսկ Տոսպ ու Քաջբերունիք ու Առբերանի, որ է Վանը ու Արճէշ ու Բերկրի, ելած են Աղթամարի իրաւասութենէն։

204. Յակոբ կաթողիկոս, չափազանց ուրախացած այդ յաջողութեան վրայ, օրհնութեան կոնդակ մը յղած է Վասպուրականցիներուն, ուստի փոքրիկ հատուած մը միայն ունինք մեր ձեռքը (Զամ. Գ. 456)։ Ի հարկէ յղած է խնդրուած միւռոնը, և եպիսկոպոսներու համար ալ յարմար տնօրինութիւնն ըրած, Աղթամարի Դաւիթ կաթողիկոսն ալ իւր կողմէն անգործ մնալ ուզած չէ, և այլազգի ամիրայն իւր կողմը շահելով, ուզած է վրէժ լուծել Մեծոփի գումարման գլխաւոր դերակատարներէն ու ժողովուրդէն։ Ինչչափ ալ իրմէ բաժնուող երեք գաւառները չէ կրցած վերստին իրեն հպատակեցնել, այլ Մեծոփի ժողովին գլխաւորները հարկադրուած են գաղտագողի փախուստով այն կողմերէն հեռանալ և վտանգէ ազատիլ (Մեծոփ. 53), գուցէ ոմանք ալ Դաւիթի վրէժխնդրութեան զոհ են գացած։ Փախչողներուն գլխաւորներն եղան Գրիգոր Տաթեւացի և Յովհաննէս Մեծոփեցի, որք մաղապուր ապաւինեցան Սաղմոսավանք, ուր առաջնորդ էր իրենց աշակերտակիցը, Յակոբ վարդապետ. անկէ ալ անցան Տաթեւ։ Վասն զի Առաքել եպիսկոպոս, յատուկ խնդրակներ ղրկելով իրեն մօտ բերել տուաւ յիշեալ երկուքը, ուրիշ իրենց ընկերներով, որոնց մէջ կը յիշուին Թովմաս Մեծոփեցի պատմագիրը, Մկրտիչ Մեծոփեցի, Յակոբ Ռշտունի, և Մկրտիչ Բերկրեցի (Մեծոփ. 61)։ Այդ ամէն եղելութեանց հետեւանքն եղած է, որ Աղթամարի կաթողիկոսութիւնը փոքրացած է, բայց ջնջուած չէ։ Միևնոյն ատեն իւր կղզիացեալ վիճակէն ելնելով, ընդհանուր ազգին գործերուն մասնակցիլ սկսած է, ինչպէս յետագայ դիպուածներ պիտի ցուցնեն, մինչև իսկ Ամենայն Հայոց աթոռին տեղափոխութեան գործակից լինելով։

205. Գրիգոր Տաթեւացիի կատարած այդ տաժանակիր տեղափոխութիւնը, և ձմեռնային եղանակի մէջ Մեծոփէ Սաղմոսավանք

և անկէ Տաթև փախստական ուղևորութիւնը, ՁԸասեցին իւր առողջութեան. և կատարեալ հիւանդ վիճակի մէջ հասաւ Տաթեւ։ Վերջին օրերուն մէջ իւր բոլոր ճիգը թափեց աշակերտներէն ոմանց մեծ վարդապետութեան գաւազան տալ, ամենքը խրատներով զօրացուց. և ինքն ալ աղօթքներով կաղդուրուած, Տաթև հասնելուն ութերորդ օրը վախճանեցաւ. Ս. Ստեփանոսի նախավկայի տօնին օրը (1410 դեկտեմբերի 25)։ Իւր ուղեկիցը, Յովհաննէս Մեծոփեցի վարդապետն ալ, աւելի երկարակեաց չեղաւ, և քանի մը ամիս հիւանդութիւն կրելէ ետքը, նա ալ Ի յարութեան օրն գնաց առ Քրիստոս։ Այլ կ'երևի թէ ոչ բուն զատկի օրը, այլ մեռելոցին, վասն զի կը յաւելու պատմիչը (Մեծոփ. 61) Ի նոյն յօրն որ ասի Անսկիսքն Աստուած (1411 ապրիլ 13)։ Տաթևացիին դառնալով շատ երկարել պէտք չեմք սեպեր անոր յարգն ու արդիւնքը բացատրելու։ Մեր տօնացոյցին վերջին սուրբ է, ազգային խիղճին վկայութեամբ այդ մեծ պատուոյն արժանացած։ Եկեղեցական պատմութեան մէջ ալ վերջին փայլուն անունն է, որ դժբախտ և անկեալ տարիներու մէջ բացառապէս կը փայլի, և արդիւնաշատ եղած է, իւր վարդապետին, Յովհաննէս Որոտնեցիին, գործը շարունակելով, Ունիթորներու ազդեցութիւնը կոտրելով, և լատինամիտ ուղղութիւնը ազգին մէջէն հեռացնելով։ Շատ են Տաթևացիին երկասիրութիւնները, որոնց մէջ բազմաթիւ են Սուրբ Գրոց, եկեղեցական հայրերու, և արտաքին փիլիսոփաներու մեկնութիւններ։ Հարցմանց գիրքը, իւր ոճով, կը յիշեցնէ մեզի նոյն ժամանակի լատին Սկոլաստիկներուն գրութիւնները, և թէպէտ ոչ ամեն կէտեր նոյնչափ արժէք ունենան, տակաւին բեղմնաւոր և սուր միտքի արտայայտութիւններ են։ Ծիսական մասին Տաթևացիին յատուկ գործն է վարդապետութեան տասնուչորս աստիճաններուն կարգը, և չեմք գիտեր թէ ուրիշ կարգադրութիւններ ալ ունեցաւ, որովհետև իրեն անունով մակագրուած ուրիշ բան չեմք գտներ, և երևի թէ նախնի կարգերուն երկիւղած հետևողութիւնը սիրեց։ Բազմաթիւ եղան Տաթևացիի աշակերտները, և ոչ միայն իւր մեռնելէն ետքը աշակերտները կը գտնուէին, այլ անկէ մինչև հիմայ այդ աշակերտութիւնը շարունակեց, և այժմեան հայ վարդապետութիւնը ամբողջաբար Սիւնեաց վարդապետանոցի և Տաթևացիի շարունակութիւն կը համարուի։

206. Այն օրերուն որ Յովհաննէս Մեծոփեցին սրբութեամբ կը վախճանէր Տաթևի վանքը, Յակոբ կաթողիկոս ալ կը վախճանէր Սսոյ մէջ, որուն միաբաններէն այն մասը, որ դժկամակութեամբ տեսած էր Յակոբին այլազգի ամիրային օգնութեամբ

հայրապետական աթոռը գրաւելը, աթոռէ զրկելու դժուարութիւն տեսնելով, կեանքի զրկելու ձևը գործածեցին և դեղակուր սպանեցին։ Բայց այդ կերպով չկրցան աթոռը իւր անկեալ վիճակէն բարձրացնել. մանաւանդ թէ զեղծումներու դուռ բացին, և դաւաճաններ աթոռի ժառանգութեան համար իրարու հետ սկսան կագ ու կռիւ ընել, մինչև որ մէջերնէն աւելի յաջող եղաւ Գրիգոր եպիսկոպոս մը, այլազգի ամիրան թև ու թիկունք ընելով, ի հարկէ ոչ-օրինական միջոցներով։ Յակոբի անձին վրայ լաւ բան մը գրելիք չունինք, իւր միակ պատիւն է Տաթևացիէն պատուած լինելը։ Իւր ուղղութիւնն ալ Աղթամարյական կը կարծուի. զի Մեծոփեցին անխտիր կ՚ամբաստանէ Սսոյ վերջին գահակալները (Կոստան. 55)։ Այսու հանդերձ, թէ ոչ կատարեալ ջատագովութեան, զոնէ մասնակի թեթևացման փաստ մը կ՚ընձեռէ, Արևելեայց գործակցելով Աղթամարի գործին մէջ ուղիղ ընթացքի հետևելը։ Գուցէ առ Վասպուրականցիս գրած թուղթը աւելի լոյս ընծայէր, եթէ ամբողջութեամբ աչքի առջև ունենայինք։

Մաղաքիա ան. Օրմանեան

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԱՍԱՆԵԱՆՑ [1])

ԵՒ

ԻՐԱՆԻ ՆՈՒԱՃՈՒՄԸ ԱՐԱԲԱՑԻՆԵՐԻՑ

(Ա. Կրիմսկու)

Խաղաղութեան դաշն կապելուց յետոյ Թէոդոսի հետ, Վռամ V կարողացաւ առ ժամանակ դլուխ դալ սպիտակ Հոների և Հայաստանի հետ։ Անցաւ մի քանի տարի և ահա (429 թ.) նա բոլորովին վերացրեց աւատական վարչութիւնը Հայաստանում, սովորական Պարսից նահանդ դարձնելով այն (ինչպէս որ Բիւզանդացիք վարուեցան Հայաստանի իրանց մասում)։ Իսկ Հեփթալները կամ Սպիտակ Հոները տակաւին ամբողջ մի դար անհանգիստ էի անում Իրանը և պատերազմը նոցա հետ V-դ դարում պատճառ դարձաւ խաղաղ յարաբերութիւնների Բիւզանդական կայսրութեան հետ։

Դառնանք նորից Հայոց պատմութեան։ Ինչպէս վերը յիշեցինք, Խոսրով III-դի մահից յետոյ Պարսից Յազկերտ I արքայն Հայոց վրայ թագաւոր կարգեց իւր որդի Շապուհին 416 թ։ Ըստ Գարագաշեանի այս Շապուհը թագաւորեց 416—419-դ որանից յետոյ երբ նա թողեց Հայաստանը և գնաց Պարսկաստան հօր յաջորդելու դիտաւորութեամբ, Հայաստանում անիշխանութիւնը տևեց երեք տարի (419—421)։ Գուցէ այս հանգամանքի վրայ է ակնարկում պ. Կրիմսկի, ասելով, թէ աւատական Հայաստանը ծգտում էր անկախութեան։ Վռամ V, ինչպէս երևում է, Հայաստանը խաղաղացնելու նպատակով, Հայերի խնդիրքով նոցա թագաւոր է նշանակում Վռամշապուհի որդի Արտաշէսին, անունը փոխելով Արտաշիր. սա Արշակունեաց վերջին շառաւիղն եղաւ։ Արտաշիր (421—429) հազիւ ութը տարի թագաւորելուց յետոյ՝ կանչուեցաւ Վռամի կողմից

[1]) Լումայ № 2.

Պարսկաստան որով Արշակունեաց հարստութեան վերջ դրուեցաւ և Հայաստանը պարսկական նահանգ դարձաւ, ուր իբրև մարզպան եկաւ Վեհդենշապուհ։ Ո՞ւր մնաց հէքն Արտաշիր, յայտնի չէ. հաւանական է, ասում է Գարագաշեանը, որ նա պահուեցաւ Պարսկաստանում, ուր և մեռաւ. (տե՛ս. Քնն. պատ. մ. IV. էջ. 19)։

Այսպէս տկարութեան կամ մանաւանդ Հայոց նախարարների անմիաբանութեան պատճառով վերջացաւ Արշակունեաց մեծ թագաւորութիւնը, որ տևելով 580 տարի, խաղալիկ էր երկու հզօր տէրութեանց Հռոմայեցւոց և Պարսից քաղաքականութեան։ Մի այլ տեղում (Քնն. Պատ. մ. II. էջ. 267) Գարագաշեանը հետևեալ կերպով է բացատրում Հայաստանի անկումը. «պատճառք անկման Հայոց են պէսպէս, ներքին և արտաքին։ Ներքին պատճառք են, որպէս ասացաւ՝ դիրք երկրին, որ առնէր զնա ասպարէզ անդուլ պատերազմաց 'ի մէջ երկու հակառակորդ տէրութեանց (Բիդդէր). սակաւութիւն— «եմք ածու փոքր և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ (Խոր. I. 3), և աւատային (féodal) դրութիւնն։ Իսկ արտաքին պատճառք են՝ երկու դրացի մեծ տէրութեանց միայն մոլեռանդութիւնն և միւսոյն յոռի քաղաքականութիւնն։ Այնպէս, որ եթէ Հայաստանը մնար ևս հեթանոս՝ հաւանական է թէ կործանէր արտաքական զօրութենէն, ինչպէս եղաւ քան զնա շատ աւելի հզօր արևմտեան դրացին, նաև կ'ընկղմէր 'ի նմա կրօնիւ, ինչպէս եղաւ միւս դրացին, արևելեանն. մինչ քրիստոնէութիւնն իբրև եկեղեցի՝ տուաւ զրեթէ բարբարոս Հայուն ոչ միայն լինել մասնակից քրիստոնէական քաղաքակրթութեան, այլ և ունել միութիւն՝ որմէ զուրկ էր և յորոյ 'ի շնորհս կայ ցարդ և կը շնչէ»։

Այսպէս, ուրեմն, Հայաստանի անկման ներքին պատճառներն էին՝ երկրի դիրքը, սակաւութիւն (բնակիչների) և աւատային դրութիւնը։ Առաջին երկու պատճառներին դժուար է ծայնակցել և ընդունել իբրև իրական փաստ. վասն զի Հայաստանի լեռնոտ դիրքը մի բարեպատեհ առաւելութիւն էր նորա բնակիչների համար և հազարաւոր միջոցներ էր ընծայում նոցա

պաշտպանուելու թշնամուց և յետս մղելու նորան։ Ռուսաց հզօր պետութեան հարկաւոր եղաւ վեթսուն տարի անդադար պատերազմներ մղել կովկասեան լեռնականներին նուաճելու համար։ 25 կամ 30 հազար մի բուռն Զէյթունցիք, շնորհիւ իրանց ներքին միութեան, մինչև մեր օրերը կարողացան կիսանկախ դրութիւն պահպանել։ Նոյնը կլինէր և Սասունի վիճակը, եթէ կոտրած դրդալի նման՝ մէջ տեղ չընկնէին պատմութեան առաջ յանցաւոր տնտսուն յեղափոխականները, որոնք առանց 'ի կշիռ առնելու Եւրոպական ընդհանուր քաղաքականութիւնը, սկսեցին մի յանդուգն գործ, որի հետևանքն եղաւ Սասունի ջնջումը։

Երկրորդ պատճառը իբր թէ բնակիչների սակաւութիւնն էր։ Բայց «սակաւութիւն» ծղծղելի բառ է և սոյն դէպքում դժուար հասկանալի։ Եթէ ներկայումս, բուն տաճկա-Հայաստանի հողի վրայ՝ մնացել է 1½ միլիոն հայ ժողովուրդ, դարևոր գաղթականութիւնների և վերջին կոտորածներից յետոյ, Արշակունեաց մեծարոյ թագաւորութեան օրերում բնակիչների թիւը առնուազն պիտի լինէր 10-ից մինչև 15 միլիոն, ինչպէս լսել ենք հանդ. պրոֆ. Ք. Պատկանեանի բերանից նորա դասախօսութիւնների միջոցին։ Դա մի այնպիսի պատկառելի թիւ է, որին կնախանձէին արդեան շատ Եւրոպական փոքր պետութիւններ՝ Սուեդիա, Նորվեգիա, Դանեմարկ, Զուեցերիա և այլն, որոնք գոյութիւն ունին շնորհիւ իրանց բուն ազգային քաղաքականութեան և յաջողել են modus vivendi մշակելու հզօր պետութիւններից ազատ լինելու համար։ Ոչ, Գարագաշեանի վերը բերած երկու պատճառները համոզիչ չեն և թոյլ են. անկման պատճառը այլուր որոնելու է, ազգային միութեան բացակայութեան մէջ։ Անհնարին կլինէր միութիւն գտնել Հայաստանում, որի բնակիչների մի մասը կռապաշտ էր, միւսը— քրիստոնեայ։ Այս հանդամանքից ծագեցան երկու կուսակցութիւններ, որոնց մէկը քարշում էր դէպի զրադաշտական Պարսկաստանը, միւսը դէպի կրօնակից Բիւզանդիոնը։ Նոյն միութեան բացակայութեան շնորհիւն էր, որ քայքայուեց Մեծին Տիգրանի լայնածաւալ տէրութիւնը, տեղի տալով ռազմագէտ Հռով-

մայեցւոց սակաւաթիւ, բայց կիրթ լեգէոնների առաջ։ Բայց հեթանոս Հայերն 'ի հնումն կրօնական միութիւնից էլ զուրկ էին և չկարողացան ստեղծել իւրեանց յատուկ դիցաբանութիւնը։ Հայոց պանթէոնում, բուն հայկական աստուածների հետ, պատահում են Պարսից, հին Յունաց և սեմական աստուածների անուններ*). և դորանից պարզ է, որ մեր նախնիքը չեն կարողացել մշակել իրանց համար ինքնուրոյն կրօնական սիստեմ, ինչպէս տեսնում ենք Յունաց, Հռովմայեցւոց, Գերմանացւոց, Հնդկաց։ Միշեալ երկու պատճառների, այն է՝ ազգային միութեան և կրօնական միութեան վրայ ծանրանում է նաև աւատային դրութիւնը, մի չարիք, որի դէմ կռուելու անզօր հանդիսացան ապիկար Արշակունի թագաւորները։ Արշակունեաց շրջանի թագաւորների և Հայոց իշխանների ու նախարարների փոխարինի յարաբերութիւնները լուսաբանելու համար 'ի դէպ եմ համարում մէջ բերել այստեղ պրոֆ. Ք. Պատկանեանի կարծիքը, սկսելով փոքր ինչ հեռուից։

«Ասորեստանի անկումից յետոյ, Հայերը քաղաքական կողմից ենթարկուեցան Մարաց ազդեցութեան ներքոյ, պահպանելով իրանց ներքին կազմակերպութեան անձնմխելութիւնը և հասարակաց իշխան ընտրելու իրաւունքը։ Ապա, Պարսից ժամանակ, Հայերը, ուրոյն նահանգ են կազմում Դարեհի կայսրութեան, օգնական զօրքեր հասուցանելով և հարկ վճարելով։

Ինչպէս Ալեքսանդր Մակեդոնացուց առաջ, այնպէս և յետոյ, Հայաստանը, գտնուելով հին աշխարհի քաղաքակիրթ ազգերի կենդրոնում, տեղի էր, ուր մինչև վերջին ժամանակս Արևելքի և Արևմուտքի ընդհարումներն էին կատարւում։ Զնայելով այդ հանդամանքին, Հայաստանը, իբրև պետութիւն, մեծ դեր չէր խաղում մարդկութեան պատմութեան մէջ, և նորա անունը ըստ մեծի մասին աշխարհագրական յորջորջումն էր երկրի, ուր հզօր դրացիք իրանց վէճերն էին լուծում, սկսեալ ասորեստանցիներից և մարերից մինչև տաճիկներն ու ռուսերը։

Գրաւելով ժամանակակից Ֆրանսիայի չափ մի տարածու-

*) Տես. Очеркъ исторіи древней Армянской литературы К. Патканова С. П. Б. 1880 г.

թիւն, վայելելով բարեպատեհ աշխարհագրական դիրք Սեաւ և Կասբից ծովերի մէջ, որոնցից անջրպետւում էր հողի նեղ գծով, Հայաստանը ամենայն ժամանակ ներկայացնում էր բնութեան հարուստ բերքերով մի երկիր։ Թուի թէ, լեռները լիովին կարող էին պաշտպանել նրան թշնամեաց արշաւանքներից։ Տիգրիս և Եփրատը յարմար հաղորդակցութեան ճանապարհներ էին Միջագետքի և Պարսից ծովածոցի հետ։ Հնդկական վաճառականութեան նշանաւոր մասը դանազան ուղիներով անցնում էր Հայաստանից դէպի Պոնտոս։ Աչքի առաջ ունենալով այս բոլոր օգտաւէտ պայմանները, յոյժ ծեռնտու դրութիւնը, որ չէր վայելում Առաջաւոր Ասիոյ և ոչ մի երկիրը, Հայաստանը, որչափ յայտնի է, ինքնուրոյն կուլտուրայի հայրենիք չէր,*) իսկ նորա բնակիչները ոչ միայն չեն եղել աշխարհակալական ժողովուրդ, այլև երկար ժամանակով ու լիովին անկախ էլ չեն եղել։ Այս երևոյթի պատճառները որոնել դրացիների գերակշռող քաղաքական հզօրութեան մէջ հիմնաւոր չէ այնքան, վասն զի զօրեղ դրացիները սկզբում ամենևին զօրեղ չէին և հզօր դարձան Հայերի օգնութեամբ։ Ինչո՞ւ Հայերը ինքեանք չկարողացան կազմել հզօր քաղաքական մարմին, փոխանակ մշտական կախումն ունենալու հզօր դրացիներից և նուաճուած լինել օտարներից։ Դորա պատճառը կայանում է յատկապէս երկրի քաղաքական կազմակերպութեան և բնակիչների բնաւորութեան մէջ։ Անիրաւացի կլիներ պնդել, թէ Հայերը զուրկ էին այն սովորական յատկութիւններից, որոնք պատահում են ուրիշ աւելի բախտաւոր ազգերի մօտ։ Ընդհակառակն, նոցա մօտ պակասութիւն չէ նշմարւում ոչ քաջութեան, ոչ էլ տեղական հայրենասիրութեան կողմից։ Սակայն բոլոր այս յատկութիւնները մեծաւ մասամբ նսեմանում էին փոխարինի նախանձով, միութեան և ճշմարիտ

*) Պրոֆ. Պատկանեանի դատավճիռը այստեղ շատ խիստ է. ապա մեր հին հեղինակները իրանց դասական չնաշխարհիկ լեզուով, թարգմանուած ևրոպական լեզուների, հին հայկական ճարտարապետութիւն, որի մնացորդները և աւերակները մարդ են հիացնում, ո՞ւր մնացին։ Մ. Շ.

հայրենասիրութեան բացակայութեամբ։ Ճակատագրի բերմամբ, Հայերի երկարատև պատմական գոյութեան միջոցին երևան չեկաւ այն արտաքին շաղկապող զօրութիւնը, որ ուրիշ ազգերի մօտ ստեղծում է հզօր կենդրոնական իշխանութիւն։ Միանգամայն զուրկ քաղաքական կրթութիւնից, որով ճանաչւում է բարձր պետական նպատակը այն է՝ զոհել իւր մասնաւոր շահերը յօգուտ ընդհանուրի, երկրի տիրապետող դասակարգը, Հայոց իշխանները, անընդունակ էին միմեանց հետ համաձայնութիւն կայացնել բարձր քաղաքական և հասարակական նպատակներին հասնելու համար... իսկ այսպիսի պայմաններում, Հայաստանի կախումն դրացիներից, որոնք զօրեղ պետական մարմիններ կազմակերպեցին, անխուսափելի էր։

Բռնելով Աքիմենեանց տեղը, Պարսից Արշակունիք իրանց քաղաքական շրջանը պիտի գրաւէին նաև Հայաստանը։ Զկամենալով գործ ունենալ իւրաքանչիւր փոքր ի շատէ հզօր իշխանական տոհմի հետ, նոքա վճռեցին Հայաստանից ուրոյն թագաւորութիւն կազմել և հնազանդութեան մէջ պահել նրան ազգելով թագաւորի անձնաւորութեան վրայ։ Երկար բանակցութիւններից յետոյ նոցա յաջողուեց համոզել ամենանշանաւոր Հայոց իշխաններին իրանց թագաւոր ճանաչել Արշակունի արքայազուններից մէկին։ Այդ արքայազնը, ըստ Գարագաշեանի, Պարսից Վաղարշ Ի-ի թագաւորի երդայր Տրդատն էր, Մ. Խորենացու Արտաշէս II-ը, որ Կորբուլոն զօրավարի (Հռովմայեցւոց) խորհրդով գնաց Հռոմ և Ներոն կայսեր ձեռքից ստացաւ իւր թագը (61—82)։ Երկու երկիրների պետերի արեան հարազատութիւնը երաշխաւորելու էր հասարակաց շահերը ընդդէմ արտաքին թշնամիների, յատկապէս Հռովմի, որ սկսել էր խառնուել Ասիոյ գործերին։ Բայց Պարթևաց հաշիւները չարդարացան։ Նոցա ստեղծած թագաւորական իշխանութիւնը այն ժամանակի Հայերի բնաւորութեան հակառակ էր և երբէք ժողովրդականութիւն չստացաւ։ Աղնուական տարրը Հայաստանում շատ զօրեղ էր, որ թոյլ տար հաստատուելու այնտեղ արքայական հզօր իշխանութեան...

Միևնոյն անուն կրող բարձրագոյն իշխանութիւնը Պարս-

կաստանում և Հայաստանում իրօք բոլորովին տարբեր էր։ Պարսկաստանում դա հաստատուած էր բնակիչների բոլոր խաւերի ներքին համոզմունքի վրայ, որ, նախընթաց հարստութիւնից վտրժուած անպայման հնազանդութեան, յանձին Թագաւորի տեսնում էր բնական պաշտպանին պաշտօնական անձանց դեղծութիւններից։ Բացի դորանից Պարսկաստանում գոյութիւն չունէր հինաւուրց ազնուականութիւն։ Հայաստանում, ընդհակառակն, քաղաքների բնակիչների չնչին քանակութեան պատճառով, բնակչութեան գլխաւոր բաղմութիւնը բաղկացած էր գիւղացիներից, որոնք իրանց իշխաններից էին կախուած (իբրև ճորտեր) և ըստ երևոյթին, գոհ էին իրանց դրութիւնից։ Եւ այդպէս կենդրոնական իշխանութիւնը դէմ յանդիման կանգնած էր ոչ թէ ամբողջ ազգի, այլ միայն իշխանների։ Սեպուհները, մանաւանդ արարատեան նահանգում, որ Թագաւորի բնակութեան տեղի էր, վայելում էին դրան ողորմածութիւնը և պաշտպանութիւնը զօրեղ իշխանների դէմ, հաւատարիմ էին մնում Թագին. բայց աւելի հզօր և գոռոզ առհմերը տակաւ տակաւ մեկուսանում էին դրան ազդեցութիւնից և իրանց համար աւելի օգտաւէտ էին համարում գաղտնի համաձայնութիւնների մէջ մտնել դրացիների հետ 'ի դէպս ընդդիմադրութեան Թագաւորին։ Հնարաւորութիւն չունենալով յենուելու ոչ գիւղացիների ոչ էլ քաղաքացիների վրայ, Թագաւորները հարկադրուած էին ստեղծել նորանոր նախարարութիւններ դրան հաւատարիմ մարդկանցից։ Արարատեան աշխարհում մանր կալուածները բաշխում էին ծառայող մարդկան, որոնցից կազմում էին թիկնապահ և ոստանիկ գնդեր Թագաւորի իսկ հրամանատարութեան ներքոյ։ Բացի դորանից ապստամբ նախարարները դաւաճանութեամբ կոտորում էին, նոցա կալուածները գրաւում էին յարքունիս և բաժանում էին եկեւոր գնդերի զօրապետներին։ Դոցանից կազմելու էին դրան հաւատարիմ ազատանի։ Բայց դաւերը, բանսարկութիւնները, որ տիրապետում էին դրան, թեթևամիտ Թագաւորների խստութիւնները ու բռնութիւնները այնտեղ հասցրին, որ այդ նոր իշխաններն էլ խնամեցան հին ցեղերի հետ և շուտով նոցա ոգւով տոգորուեցան։

Պրոֆ. Պատկանեանի այս սուր դիտողութիւններից դրժ-ժուար չէ եզրակացնել, որ մեր հին իշխանները և նախարարները չէին հասունացել պետականութեան գաղափարի համար և զէն 'ի ձեռին պաշտպանելով թագաւորի դէմ իրանց իրաւունքները և տոհմային արտօնութիւնները, նոքա ստորագրում էին դորա-նով իւրեանց մահուան դատակնիքը, թուլացնում էին և ջլա-տում բարձր իշխանութեան զօրութիւնը, ապա, ուրեմն, Հա-յաստանը մատնում օտարների ձեռքը։ Հին Բաբելոնի, Ասորես-տանի, Մարաց և յետոյ Պարսից միահեծան տեղ պետութիւն-ների պատմութիւնը, ինչպէս երևում է, նոցա համար չէր կա-րող օրինակ լինել. նոքա չէին կամենում հասկանալ, թէ աւա-տականութիւնը Հայաստանում անաքրոնիզմ էր, երբ արևել-քում և արևմուտքում կանգնած են երկու կուլտուրական լայ-նածաւալ և միահեծան տերութիւններ, որոնց քաղաքականու-թեան խաղալիք էր Հայաստանը, հարկադրուած հանդամանքնե-րից մերթ մէկին օգնել իւր հայագունդ զօրքերով, մերթ մի-սին և այսպէս նպաստել դրացի մրցակից թշնամիների զօրա-նալուն։ Հայերի քաղաքական տհասութիւնը չվերջացաւ Արշա-կունեաց անկմամբ, այլ, ինչպէս կը տեսնենք, շարունակուեց մարզպանների, Բագրատունեաց, Ռուբինեանց հարստութիւն-ների ժամանակ և յարատևեց մինչև վերջին կոտորածները Կի-լիկիայում։ Այսուհետև արդեօք զգաստանալո՞ւ է հայութիւնը qui vivra—verra.

Մ. Տովրեան

ԼԵԳԵՆԴՆԵՐ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ[1])

Բ.

ԿԱՅՍՐԻ ՏԵՍԻԼԸ

Այդ այն ժամանակն էր, երբ Հռոմի կայսրը Օգոստոսն էր, իսկ հրէաների թագաւորը՝ Հերովդէսը։

Եւ ահա, վրայ հասաւ մեծ և սուրբ գիշերը։ Դա ամենախաւար գիշերն էր, որ երբ և է մարդիկ տեսել էին։ Թւում էր, թէ երկրի վրայ կախուել էին ինչ-որ մռայլ կամարներ։ Անկարելի էր զանազանել ջուրը հողից և անհնարին էր գտնել ամենածանօթ ուղին անգամ։ Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ երկնքի վրայ ոչ մի լուսաւոր տեղ չէր երևում։ Բոլոր աստղերն այդ գիշեր մնացել էին տանը, իսկ հեզիկ լուսինը դարձրել էր իւր երեսը երկրից։

Եւ որչափ թանձր էր խաւարը, նոյնչափ խորն էր այդ գիշերուայ լռութիւնն ու անդորրութիւնը։ Կանգ էր առել գետերի հոսանքը, չը կար մեղմիկ քամու շունչը և մինչև իսկ կաղամախին չէր դողդողում։ Եթէ որևէ մէկը գնար ծովի ափը, նա կը տեսնէր, որ նրա ալիքները չէին զարնւում ափերին, իսկ եթէ երթար անապատը, աւազը ձայն չէր հանիլ նրա ոտների տակ։ Ամեն ինչ քարացած էր ու անշարժ, որպէսզի չը վրդովուի սրբազան գիշերուայ անդորրը։ Թռչունը չէր ուզում աճել, չէր իջնում ցողը, իսկ ծաղիկները չէին համարձակւում արձակել իրենց բուրմունքը։

Այդ գիշեր արիւնարբու գազանները որսի չէին դուրս եկել, օձերը չէին կծում, շները չէին հաչում և, որ հրա-

---

[1]) Լումայ № 2

շալին է, անշունչ առարկաներից և ոչ մէկը չէր վրդովում գիշերուայ սրբութիւնը, չուզենալով ծառայել չար գործերին. չէին կոտրում կողպէքները, դանակն անկարող էր արիւն թափելու։

Այդ գիշեր Հռոմում, կայսերական պալատից դուրս եկան մի խումբ մարդիկ և հրապարակով անցան դէպի Կապիտոլիյ։

Դրանից քիչ առաջ, արևը մայր մտնելու ժամանակ, կայսրի շրջապատողները հարցրել էին նրան, թէ արդեօք, նա դէմ չի՞ լինիլ, եթէ նրանք 'ի պատիւ իւր տաճար կառուցանեն Հռոմի սրբազան լերան վրայ։ Սակայն Օգոստոսը միանգամից չը տուաւ իւր համաձայնութիւնը։ Նա չը գիտէր, արդեօք, հաճելի կը լինէր աստուածներին, եթէ ինքն էլ նրանց հաւասար ունենար իւր անուան տաճար, ուստի որոշեց նախ հէնց այդ գիշեր զոհ մատուցանելիւ հովանաւորող-աստծուն, որպէսզի իմանայ նրա կամքը այդ հարցի առթիւ։

Եւ ահա նա մի քանի մտերիմների ուղեկցութեամբ գնաց պալատից այդ զոհը մատուցանելու։

Օգոստոսը հրամայեց, որ իրեն տանեն պատգարակի վրայ, որովհետև նա ծեր էր և նրա ոյժը չէր պատում Կապիտոլիի բարձր սանդուղքներով քայլել։ Նա բռնել էր ձեռքին աղաւնիների վանդակը, որոնց պիտի զոհ բերէր։ Նրա ուղեկիցների թւում չը կային ոչ քրմեր, ոչ զինուորներ և ոչ էլ աստիճանաւորներ, այլ բոլորն էլ նրա մըտերիմ բարեկամներն էին։ Առջևից անցնում էին ջահրնկալները և լուսաւորում ճանապարհը, իսկ յետևից գալիս էին ստրուկները, տանելով զոհաբերութեան եռանկիւնի սեղանը, սուրը, սրբազան հուրը և զոհի այլ պարագաները։

Ճանապարհին կայսրը տաք-տաք խօսակցում էր իւր ուղեկիցների հետ, ուստի և ոչ ոք չէր նկատում գիշերուայ անսահման անդորրութիւնն և մեռելային լռութիւնը։

Եւ միայն, երբ հասան Կապիտոլիի գագաթը, որտեղ

պէտք է կառուցուէր նոր տաճարը, նրանց համար պարզուեց, որ մի արտասովոր բան է կատարւում։

Այդ գիշերն, անկասկած, նման չէր միւս բոլոր գիշերներին, որովհետև ժայռի ծայրին նրանք տեսան մի ինչ-որ զարմանալի ու տարօրինակ առարկայ։ Սկզբում նրանց թուաց, թէ դա մի հին և կայծակնահար եղած ձիթենի է, յետոյ նրանց երևաց, թէ ժայռի վրայ է բարձրացել Արամազդի տաճարից հին քարէ անդրին։ Վերջապէս նրանք ճանաչեցին, որ դա պառաւ Սիբիլլան է։

Երբէք նրանք տեսած չէին այդչափ ծեր, կոշտացած ու ահռելի արարած։ Այդ պառաւը սարսափ էր ազդում։ Եթէ կայսրը չը լինէր նրանք մի ակնթարթում կը թողնէին, կը փախչէին ու կը թագնուէին իրենց անկողիններում։ «Ահա նա,—շշնջում էին նրանք իրարու ականջին,—որ նոյնչափ տարիք ունի, որչափ աւազ կայ նրա հայրենիքի ափերի վրայ։ Բայց ինչու նա հէնց այսօր, այս գիշեր է դուրս եկել իւր այրից։ Ի՞նչ է գուշակում կայսրի և կայսրութեան համար այդ կինը, որ իւր մարգարէութիւնները գրում է ծառերի տերևների վրայ և գիտէ որ քամին հասցնելու է իւր իմաստուն խօսքերը նրան, ում որ վերաբերում են դրանք»...

Նրանք բոլորն էլ այնպիսի երկիւղ էին զգում, որ եթէ Սիբիլլան որևէ շարժում անէր, նրանք իսկոյն ծունկ կը չոգէին։ Բայց նա նստած էր անշարժ, կարծես կեանք չը կար նրա մէջ։ Մէջքից կռացած, նստած էր նա ժայռին և, ձեռքը դնելով աչքերին, նայում էր գիշերուայ մթութեանը։ Թւում էր, թէ նա բարձրացել էր բլրի վրայ, որպէսզի աւելի լաւ տեսնէր մի ինչ-որ բան, որ այդ ժամանակ կատարւում էր ուր-որ հեռւում։ Ուրեմն, նա կարողանում էր մի բան տեսնել այդ խաւարի մէջ։

Հէնց այդ վայրկեանին կայսրը և նրա շքախումբը նկատեցին գիշերուայ զարմանալի խաւարը։ Ոչ ոք նրանցից չէր կարող մի բան տեսնել նոյն իսկ կանգուն հեռաւորութեան վրայ։ Եւ որպիսի խաղաղութիւն և լռութիւն

էր տիրում։ Նոյն իսկ Տիբեր գետի խուլ աղմուկը չէր հասնում նրանց լսելիքին։ Սակայն նրանց խեղդում էր այդ օդը, սառն քրտինքը պատել էր նրանց ճակատը, ձեռները սառել էին ու անզօր դարձել։ Նրանք զգում էին, որ պէտք է մի սարսափելի բան պատահի։

Բայց ոչ ոք չէր ուզում երևան հանել իւր երկիւղը և ամենքն էլ ասում էին կայսրին, թէ դա խիստ լաւ նըշան է. ամբողջ տիեզերքը կանգ է առել, շունչն իրեն է քաշել, որ ողջունէ նոր աստծուն։

Նրանք առաջարկեցին Օգոստոսին, որ սկսի զոհաբերութիւնը և ասացին, որ պառաւ Սիբիլլան, հաւանօրէն, դուրս է եկել իւր այրից նրա համար, որ ողջունէ կայսրին։

Բայց Սիբիլլայի ուշադրութիւնն, իսկապէս, այնչափ կլանուած էր իւր տեսիլքով, որ հազիւ թէ նա նոյն իսկ նկատած լինէր Օգոստոսի երևալը Կապիտոլիում։ Իւր մտքի մէջ Սիբիլլան երևակայում էր իրեն մի հեռու երկրում և այնտեղ, թուում էր նրան, թափառում էր նա անսահման տափարակի վրայ։ Մթութեան մէջ նա շարունակ կպչում էր ինչ-որ բաների, որ նա հողաբլուրների տեղ էր ընդունում։ Նա յետ էր նայում և շօշափում էր ձեռքով։ Բայց ոչ, դրանք հողաթմբեր չէին, դրանք ոչխարներ էին։ Նա թափառում էր քնած ոչխարների ահագին հօտերի մէջ։

Յետոյ նա նկատեց խարոյկ և հովիւներին։ Կրակը վառում էր դաշտի մէջ տեղը և նա դիմեց այն կողմը։ Հովիւները պառկած էին կրակի շուրջը և քնել էին, իսկ նրանց քովը ընկած էին երկայն ու սրածայր ցուպերը, որոնցով նրանք սովորաբար պաշտպանում էին իրենց հօտերը վայրենի գազաններից։ Բայց մի՞թէ այն փոքրիկ գազանները, որոնք փայլուն աչքեր ունեն և թաւամազ պոչեր ու գաղտագողի մօտենում են կրակին,—չաղալնեբ չեն։ Այն ինչ, հովիւները իրենց ցուպերը չեն նետում նրանց վրայ, իսկ շները շարունակում են քնել. ոչխարները չեն փախչում, իսկ վայրի գազանները հանգիստ կերպով պառկում են քնելու մարդկանց կողքին։

Ահա թէ ինչ էր երևում Սիբիլլայի աչքին, բայց նա չը գիտէր, թէ ինչ էր կատարւում իւր յետևում, լերան գլխին։ Նա չը գիտէր, որ այնտեղ սեղան են սարքել, կրակ են վառել, խունկ են ծխում և որ կայսրը հանել է վանդակից մի աղաւնի, որպէսզի զոհ բերի նրան։ Բայց կայսրի ձեռքերն այնպէս ընդարմացել էին, որնա չը կարողացաւ պահել աղաւնուն, որը մի թեթև շարժում գործելով, ազատուեցաւ ու անյայտացաւ գիշերային խաւարի մէջ։

Տեսնելով այդ, պալատականները դժկամակութեամբ նայեցին պառաւ Սիբիլլային։ Նրանք նրան էին մեղաւոր համարում պատահած դժբաղդութեան մէջ։

Մթթէ նրանք կարող էին գիտենալ, որ Սիբիլլան եբևակայում է, որպէս թէ ինքը գտնւում է հովուական խարոյկի մօտ և ականջ է դնում գիշերուայ մեռելային լռութեան մէջ թոյլ կերպով լսուող զանգահարութեանը։ Արդէն երկար ժամանակ էր անցել, որ լսւում էր այդ զանգահարութիւնը, երբ Սիբիլլան հասկացաւ, որ այդ ձայնը գալիս է ոչ թէ երկրից, այլ երկնքից։ Վերջապէս նա բարձրացրեց գլուխը և տեսաւ, որ մթութեան մէջ անցնում էին լուսաւոր, փայլուն էակներ։ Դրանք հրեշտակների փոքրիկ խմբեր էին, որոնք ուրախ-ուրախ երգելով յետ ու առաջ էին թռչում տափարակի վրայով, կարծես մէկին որոնելիս լինէին։

Մինչ Սիբիլլան ականջ էր դնում հրեշտակների երգին, կայսրը պատրաստւում էր նոր զոհ բերելու։ Նա լուաց ձեռները, մաքրեց սեղանը և հրամայեց, որ բերեն երկրորդ աղաւնուն։ Եւ, թէև այս անգամ նա մեծ ոյժ գործ դրաւ, որպէսզի պահի աղաւնուն, սակայն թռչնի սահուն մարմինը դուրս սողաց կայսրի ձեռքից և անյայտացաւ խաւարի մէջ։

Կայսրին սարսափը տիրեց։ Նա ծունկ իջաւ դատարկ սեղանի առաջ և սկսեց աղօթել իւր հովանաւորող-աստծուն։ Նա աղերսում էր, որ ոյժ ստանայ դիմադրելու դժբաղ-

դութեանը, որը ըստ երևութին, գուշակում էր նրա համար այդ գիշերը։

Բայց այդ բոլորն էլ Սիբիլլայի համար աննկատելի անցաւ։ Նրա ուշադրութիւնն ամբողջովին կենդրոնացած էր հրեշտակների երգի վրայ։ որ քանի գնում, ուժեղանում էր։ Վերջապէս երգն այնչափ ուժեղացաւ, որ հովիւները զարթնեցին։ Բարձրանալով տեղներից, նրանք տեսնում էին, թէ ինչպէս ձիւնանման հրեշտակների փայլուն շարքերը, երերուելով տարափոխիկ թռչունների նման, կտրում էին գիշերուայ խաւարը։ Հրեշտակներից ոմանք ունէին ձեռներին ջութակներ ու կիթառներ, միւսները տաւիղներ և քնարներ, իսկ նրանց երգը հնչում էր մանուկների ծիծաղի չափ ուրախագին և ծիծեռնակների ծլվլոցի չափ անհոգ։ Լսելով այդ, հովիւները վերկացան, որպէսզի գնան լեռան մօտ գտնուող քաղաքը, որտեղ նրանք ապրում էին և պատմեն տեսած հրաշքի մասին։

Նրանք գնում էին նեղ ու ծուռումուռ կածանով և պառաւ Սիբիլլան էլ հետևում էր նրանց։ Յանկարծ լեռան գլուխը լուսաւորուեցաւ։ Մի մեծ ու փայլուն աստղ դուրս եկաւ ուղիղ լեռան վրայ, իսկ փոքրիկ քաղաքը փայլեց, որպէս արծաթն է փայլում աստղերի լոյսի տակ։ Թռչող հրեշտակների բոլոր խմբերն էլ ուրախագին բացականչութիւններով ուղղուեցան այն կողմը. հովիւները ուրագացրին իրենց քայլերը և, վերջապէս, սկսեցին վազել...

Երբ հովիւները հասան քաղաք, նրանք տեսան, որ հրեշտակները հաւաքուել են քաղաքի դռան մօտ գտնըզուող մի ցած գոմի վրայ։ Դա ժայռից կպած մի խրճիթ էր, յարդեայ կտուրով։ Խրճթի գլխին փայլում էր աստղը, իսկ հրեշտակների նորանոր խմբեր շարունակ գալիս էին։ Մի մասը նրանցից իջել էր կտուրի վրայ, կամ տան յետևի ուղղաձիգ ժայռին. միւսները, բացելով իրենց թևերը, ճախրում էին խրճթի գլխին։ Եւ հրեշտակների այդ թռիչքը լուսաւորում էր օդը մեծ տարածութեան վրայ փայլուն լուսով։

Այն վայրկեանին, երբ քաղաքի վրայ փայլեց աստղը, ամբողջ բնութիւնը միանգամից զարթնեց,—և կապիտոլիի վրայ գտնուող մի խումբ մարդիկ չէին կարող չընկատել այդ։ Նրանք զգացին, թէ ինչպէս թարմ ու քնքոյշ քամին զովացրեց օդը, նրանց շուրջը տարածուեցաւ ծաղիկների բուրմունքը, ծառերը շարժուեցան, Տիբեր գետը քլքլաց, աստղերը փայլեցին, իսկ լուսինը յանկարծ երեւեցաւ բարձրում, երկնքի վրայ և լուսաւորեց երկիրը։ Եւ ամպերի միջից ցած իջան երկու աղաւնիներ և նստեցին կայսրի ուսերի վրայ։

Երբ կատարուեցաւ այս հրաշքը, Օգոստոսը հպարտութեամբ և ուրախացած վերկացաւ, իսկ մերձաւորները ծունկ իջան։

—„Ave Caesar“, — բացականչեցին նրանք,—«Քո հովանաւորող աստուածդ պատասխանեց քեզ՝ «Դու ես այն աստուածը, որին պիտի երկրպագեն Կապիտոլիի բարձունքի վրայ»։

Եւ ուրախագին բացականչութիւնները, որոնցով փառաբանում էին Օգոստոսին նրա հիացած ծառաները, լսուեցան այնչափ բարձր, որ վերջապէս հասան պառաւ Սիբիլլայի ականջին և նրա ուշադրութիւնը խլեցին տեսիլքից։

Նա բարձրացաւ ժայռի ծայրից, որտեղ նստած էր և դիմեց դէպի այդ խումբը։ Կարծես դա մի սև ամպ էր, որ դուրս էր եկել անդունդից և բարձրանում էր լերան գլուխը։ Սարսափելի էր նա իւր ծերութեան մէջ։ Խճճուած մազերը կախ էին ընկել նրա գլխի շուրջը, մարմնի անդամների վերջաւորութիւնները սարսափելի էին. իսկ կաշին, ծառի կեղևի նման, ծածկել էր մարմինը բազմաթիւ կընճիռներով։

Այդպէս հզօր ու ահարկու՝ նա մօտեցաւ կայսրին։ Մի ձեռքով նա բռնեց նրա թևից, իսկ միւսով ցոյց տուաւ նրան հեռուն, արևելքը։

«Նայիր»,—ասաց նա, և կայսրը բացեց աչքերը և սկսեց նայել։ Ամբողջ տարածութիւնն երևում էր նրա ա-

ռաջ և նրա հայեացքը թափանցում էր հեռաւոր խորքը։ Եւ նա տեսաւ ուղղաձիգ ժայռին յենուած աղքատիկ շինութիւնը, որի բաց դռների մօտ կռացած էին մի քանի հովիւներ։ Այրի մէջ նա տեսաւ մօրը, որ ծունկ էր իջել յարդերի վրայ պառկած մանկան առաջ։

Եւ Սիբիլլան իւր ոսկրոտ ու ահագին մատներով ցոյց տուաւ այդ մանկան վրայ։

«Ave Caesar»,—ասաց Սիբիլլան արհամարհական ծիծաղով։—«Ահա այն Աստուածը, որին պիտի երկրպագեն Կապիտոլի բարձունքների վրայ։

Այն ժամանակ Օգոստոսը դուրս պրծաւ նրա ձեռքից, որպէս փախչում են խելագարների մօտից։

Բայց Սիբիլլային տիրել էր մարգարէանալու կարող ոգին։ Նրա պղտոր աչքերը փայլում էին, ձեռները բարձրացրել էր դէպի երկինք, ձայնը փոխուել էր՝ կարծես ուրիշինը լինէր. ու այնպէս զիլ էր և ուժեղ այդ ձայնը, որ լսում էր ամբողջ աշխարհում։ Եւ նա արտասանեց հետևեալ խօսքերը, որ կարծես կարդում էր վերևում, աստղերի մէջ։

«Կապիտոլիի բարձունքների վրայ կերկրպագեն աշխարհի Նորոգչին-Քրիստոսին կամ Նեռին, բայց ոչ ոչընչութիւններին»...

Այս ասելով, նա անցաւ երկիւղից քարացած մարդկանց մօտով և, դանդաղօրէն իջնելով սարից, անյայտացաւ։

Իսկ հետևեալ օրը Օգոստոսը խստագին արգելեց իւր ժողովրդին, որ չը կառուցանեն տաճար իւր անուան Կապիտոլիի վրայ։ Դրա փոխարէն նա շինեց այնտեղի պատիւ Նորածին Աստուածորդոյն մի տաճար և անուանեց այն «Երկնքի սեղան»—«Ara Coeli»։

Թարգմ. ԱՐՍԷՆ ՍԱՐԿ. ԵՒ Ն. ՏԷՐ-ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԻՒՆ [1]

ՀԻՆԳ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐԼ ԼԱՄՊՐԵԽՏԻ

III

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՑ ՀՈԳԵԿԱՆ ԲՆՈՅԹԻ ԱՆՑՈՒՄԸ. ՀՈԳԵԿԱՆ ԱՆՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԽԱՆԻԿԱՆ։

Վերջին ժամի դասախօսութեան մէջ պարզեցինք գերմանական ժողովրդի համածայն իր ներքին միջոցի ունեցած զարգացումը մինչև 19-րդ դարը. ինչպէս սրան ամեն արտաքին բան որոշ բնոյթ ու խթան էր ստանում։ Տեսանք ինչպէս հոգեկան կեանքի այլաբանական ժամանակին, Քրիստոսից 3 դար յետոյ, հետևեց տիպիկ դաստիարակութեան ժամանակը, մինչև սալեան կայսրների ժամանակը, ինչպէս այս ժամանակը տեղի տուեց շտաուֆէրների միջնադարի վերջերի սովորականի ժամանակին, ինչպէս անհատականութեան ուժեղ ժամանակը վերանորոգութեան ու բարենորոգութեան շրջաններով փոխարինուեց, որը վերջացաւ լուսաւորութեան շրջանով. ինչպէս այս բոլորից յետոյ 18-րդ դարու կիսից զգացողութիւնը, փոթորկի ու տենչերի, դասականութեան ու ռօմանտիզմի ժամանակին հետևեց անձնականութեան ժամանակը և շուրջ 1870 թուին վերջացաւ առաջին շրջանը, որի երկրորդ որոշ ու պարզ արտայայտուած շրջանում ենք գտնում և որին մենք այժմ պատկանում ենք։

Հոգեկան բազմաթիւ փոփոխութիւնների արագ նկարագրութեան ժամանակ, փոփոխութիւններ, որոնք այս ժամանակում են կատարուել, շնորհիւ նիւթը ընդարձակող ու հետաքրքիր դարձնող բազմապատկուող աղբիւրների, աշխատե-

---

[1]) Լումայ № 2

ցինք միշտ մի յատուկ մոմէնտ ի նկատի ունենալ, այն մոմենտը, որը մի ժամանակից միւսին անցնելն էր տեղի ունենում։ Այս շրջանում սկզբում մենք միայն մի անորոշ նախազգացում ունէինք, որի համաձայն պէտք է միշտ տեղի ունենային հոգեկան մեխանիկայի տիպիկ անցքերը. այդ նախազգացումը հասցրինք այն աստիճանի հաւանականութեան, որ կարիք եղաւ այս կարծիքը փորձի ենթարկել իրողութիւնների վերաբերմամբ։

Առանց այլևայլութեան պարզ է, որ այդպիսի քննութեան համար նորագոյն անցման ժամանակի երևոյթները առանձին կարևորութիւն պիտի ունենան, որովհետև կայ գիտական ամենայաւ նիւթը։ Այս պատճառով վերջին ժամանակաշրջանի այս կէտը յատկապէս պարզ ենք նկարագրել։ Հետաղօտութեան այս կապակցութեան մէջ յատկապէս վերին աստիճանի ուսանելի և անհրաժեշտ է վերջին անցումը ներկայ, կենդանի շրջանին. սրա մանրամասն նկարագիրը պահել ենք այս ժամի համար։ Այս անցման պարզ ու մանրամասն նկարագրին հէնց այս ժամում պէտք է կցուի նրա հիմք կազմող հոգեբանական մեխանիկայի ընդհանուր դիտողութիւնը. որքան մեր աղբիւրները թոյլ են տալի մի ընդհանուր հայեացք ծգելու, կտեսնենք որ այս անցումը ևս նախկին ժամանակաշրջանների անցման հոգեկան մեխանիկայի հետ նոյնն է։ Այս եզրակացութիւնը ի հարկէ այն աստիճան իւր մէջ չունի յանկարծակիի բերող մի բան, որքան այս հոգեբանութեան ընդհանուր օրէնքներից է բղխում ամենայն որոշութեամբ։

Հոգեկան զարգացման այն աստիճանը, որի վրայ է գտնուում այսօր գերմանացի ժողովուրդը, պատրաստուեց շնորհիւ այն վերին աստիճան մեծ առաջխաղացումների, որ տեղի ունեցան անտեսական, քաղաքական ու սոցիալական կեանքի շրջաններում։ Այդ ժամանակ դաշտավայրում ու քաղաքներում հանդէս եկաւ մօտաւորապէս այնպիսի մի բան, որին մենք այժմ ծեռնարկութիւն ենք ասում։ Հիւսիս արևելեան Գերմանիայի ասպետ կալուածատէրերը զբաղուած էին ահագին քանակութեամբ հացահատիկներ արտահանելով Անգլիա. սրանք իրենց անտեսութիւնը փոխեցին կապիտալիստականի և սկսեցին իրենց

գիւղերի բնակիչների կալուածատիրական-նահապետական պայմաններին վերջ տալ մասամբ հողային վարձկան բանուոր դասակարգ առաջ բերելու նպատակով։ Քաղաքացիների սկսնակ արդիւնաբերողները հիմնեցին այստեղ այնտեղ առաջին սկզբնական գործարանները։ Սրանք միայն սկիզբն էին. միայն ազատամարտներից յետոյ առաջ եկած եռանդի շնորհիւ ամէն տեղ հետզհետէ տնտեսապէս միացող վաճառականական քաղաքագիտութեան ու ժամանակի հողային հարցի վերարերեալ օրէնսդրութեան վրայ ունեցած պրուսական բարենորոգութեան շնորհիւ առաջ եկաւ աւելի ուժեղ յառաջադիմութիւն. միայն 1848 թուի յետագարձ շարժման անարգուած տարիներում երևացին նորագոյն արդիւնաբերութեան ու կապիտալիստական գիւղատնտեսութեան առաջին աստիճանի կատարեալ զարգացումը։

Այս ժամանակում արդէն երևում են այս տնտեսական անցքերի արած սոցիալական ազդեցութիւնները։ Այս միջոցում դեռևս հողի հետ կապուածների մէջ զարգացած վարձու բանուորների ահագին բազմութիւնը խաղաղ էր. միայն գաղթականութիւնների խոշոր աստիճանը ցոյց էր տալիս, որ հասարակական դրութիւնները փոխուել են։ Հողատէր ազնուականը էապէս շատ քիչ էր փոխուած. պրուսական կառավարութեան յետագարձ շարժման ետևում կազմուող հասարակական խմբակցութիւնների հոգեբանութիւնը դեռ նոր կարելի է պարզ որոշել։ 40-ական թուականներից քաղաքներում կազմուում էր բաւական պարզ արդիւնաբերական աշխատաւորների չորրորդ դասակարգը. սրանց հակառակ դուրս եկան քաղաքային նոր ազնուականութիւնը, բուրժուական ձեռնարկողները. 60-ական թուականներից նրանք իրանց քաղաքական ձգտումները զարգացրել էին, որոնք շուտով առաջ բերին սոցիալ-դէմոկրատական կուսակցութեան կազմակերպութիւնը։

Մինչդեռ տեղի էին ունենում այս տնտեսական ու հասարակական փոփոխութիւնները ազգի հասարակական ու հոգեկան աշխարհին մի նոր կերպարանք տալու, այս միջոցում առաջ եկան ազգային միութեան համար քաղաքական մեծ խրդրտումները. 1840-ին յաջորդեցին 1866-ը և 1870-ը։

Երբ արդէն կայսրութիւնը կազմուեց և կարիք եղաւ դեռ ևս Աւստրիայի դէմ վարուող պատերազմի համար փոխադարձ օգնութեան, կային արտաքին տուեալներ, որոնք հնարաւոր դարձրին արտաքին տնտեսական և հասարակական սաղմերի կատարելապէս զարգանալը։ 1871 թուի խաղաղութեան դաշինքին յաջորդեց կատաղի շուայլութեան շարժումը, որը գուշակում էր Բերլինի սնանկացումը. սակայն այն ժամանակ շուտով կարիք զարձան մաքսերը, որոնց հովանաւորող քաղաքագիտութեան վահանի տակ սկսուեց գերմանական ժողովրդի տնտեսութեան այն ծաղկումը, որը այժմ էլ առաջ է գնում, որը իւր մեծ բեղունութեան շնորհիւ գիւղին էլ նոր բնոյթ տուեց։ Ի հարկէ այս զարգացումը ունէր իւր կողմնակի դառը հետևանքները. գիւղատնտեսութիւնը չէր կարողանում նոր դրութիւնից առաջ եկած պտուղները վայելել, որովհետև օտարի մրցութեան շնորհիւ տուժում էր. հասարակական զարգացման նոր խմբերի հազարաւոր ցանկութիւններ անկատար մնացին։

Ընդհանրապէս սկսուեց, ժողովրդի աճեցողութեան շնորհիւ, դասակարգերի կատաղի յառաջադիմութիւն՝ ձեռնարկողների, բուրժուա գործարանատէրերի և վաճառականների, այլ և չորրորդ դասակարգի։ Այս յառաջադիմութեան ոյժը շերտաւորուող զարգացման մէջ արդէն արտայայտւում է։ Բոլորովին նոր դասակարգերի երևան գալը մեկուսացրեց մինչև այժմ եղած սոցիալական խաւերի ընդհանուր արժէքը։ Գիւղացիները և արհեստաւորները, ոչ պակաս նաև Գերմանիայում մտաւորականների մեծաքանակ դասակարգը, որի մէջ պէտք է հաշուել բացի այսպէս ասած ազատ կոչում ունեցողներից և պաշտօնեաներից շատ տեսակէտներով նաև սպաներին, մի նոր դիրք ստացան, քան մինչև այժմ ունէին։ Նրանց վիճակի հնուց մնացած լուսաւոր պսակը խաւարեց. տնտեսականի տեսակէտից պէտք է իրենց կաշին պաշտպանէին. քաղաքականապէս և տնտեսական տեսակէտից նրանք տուժեցին, որովհետև մինչև այժմ ունեցած բացառիկ դիրքը խախտուեց։

Հասկանալի է, որ տնտեսական ու դասակարգային նոր կազմութեան այս ազդեցութիւնները ամենարնդհանուրը ու

խորերը չէին։ Աւելի շատ այդ նշանակում էր, որ աղդային ոդին իւր խորքում շարժուել էր, որ նախկին երևակայութեան ու ոգևորութեան պայմանները անյայտացել էին և նրանց տեղը կասկածելի ընդարձակութիւն ունեցող քաօսն էր առաջ եկել։ Հոգու և ոգու այս յեղափոխութիւնը ուրիշ պատճառներով աւելի ևս ուժգնացաւ։ Այն զարդացումը, որ Գերմանիայում տեղի էր ունենում, առանձնացած չէր. ուրիշ երկրներում էլ սկսուել էր այդ՝ Եւրոպայի զանազան տեղերում. ցամաքի և ծովի այն կողմերում, յատկապէս հիւսիսային Ամերիկայում և Ճապոնիայում։ Այս փոփոխութիւնների աղդեցութիւնները, որոնք առաջ եկան շնորհիւ բնադիտութեան. տեխնիկական զարդացման և ամենից առաջ հաղորդակցութեան կատարեալ փոփոխութեան այս գործօնների միջոցով, ինչպէս որ Գերմանիա անցան, նոյնպէս և այստեղից օտար երկրներ տեղափոխուեցան։ Անմիջական հետևանքներն էին՝ աշխարհի վրայ մի նոր հայեացք. ընդարձակ փորձառութեան հաղարաւոր հորիզոններ, բոլորովին փոխուած արտաքին քաղաքականութիւն։ Սրանց միջոցով միջնորդապէս հանդէս եկած հոգեկան փոփոխութիւնների իմի համախմբուեցան այն հանդամանքի շնորհիւ, որ մի նոր ընդարձակ դիտութիւն սկսեց քանդել փորձնականութեան վերջին սահմանը. սկսուեց երկնային-ֆիզիքական աշխարհի սպէկարալ վերլուծութեան, լուսաբանութեան, ժողովրդագրութեան, տարածութեան—մարդկային տիեզերքի պատմական սրամիտ հասկացողութեան ժամանակը։

Անհնար է այս բոլոր անցքերի մանրամասնութիւնները այստեղ նկարագրել. կարևոր էլ չէ. հեշտութեամբ կարելի է յիշել անձնական կեանքում պատահած կարևոր թուերը։ Այստեղ մեզ զբաղեցնողը նախ դրանց հոգեկան աղդեցութիւնն է և այն էլ սահմանափակուած Գերմանիայով. թէև պէտք է ասել, որ այն երևոյթները, որոնք այս սահմանափակ երկրում տեսնում ենք, յաճախ խոշոր գծերով նմանում են նրանց, որոնք ուրիշ տեղերում դիտուած են։

Իբրև առաջին, հակիրճ ու ամբողջական տպաւորութիւն պէտք է նկատել մինչև այժմ եղած սոցիալ-հոգեկան դրութեան

սարսափելի աններդաշնակութիւնը։ Հասարակական յառաջխաղացումները և նրանց հետևանք կազմող երևոյթներն են՝ մեծ քաղաքի աճող կեանքը, ուր կայ մղումն ու աճապարումն. եզակի ոյժերի անհաշիւ գործադրութիւն, տեխնիկական յառաջադիմութիւն, ամբողջ աշխարհի հետ հաղորդակցութեան հնարաւորութեան խիստ ընդարձակումն. մարդկանց կողմից գիտութեան արագ ծաղկումը, որը այս ընդարձակման հետևանքն էր։ Նորագոյն զարգացման այս և հնարաւոր այլ նշաններ տպաւորութիւնների միանհամար քանակ առաջ բերին, որոնցից ոչ եզակին, ոչ ամբողջը չէր կարող խուսափել, որովհետև սրանք իրենց ամբողջութեամբ հէնց նոր պատմական կեանքի մթոլորան էին կազմում։ Մինչդեռ այսպիսով ինչպէս եզակի հոգին, այնպէս և ժողովրդական հոգին շարունակ նոր տպաւորութիւնների աճող ոյժից ընդդրկուած, միտժամանակ պաշարուած ու բռնուած էին, իրենք իրենց վրայ մինչև այժմ ունեցած իշխանութիւնը կորցրին, համարեա իրենք իրենց յանձնեցին նոր գրգիռներին։ Սկզբում այս բանը առաջ եկաւ բարձր կամեցողական բոպէների ճնշման շնորհիւ. եռանդը գործ էր դրւում նոր գրգիռների արպաւորութիւնները ընդունելու ու բաղմապատկելու համար. ընդ սմին նա սահմանափակուեց տնտեսական կեանքի ուժեղ կամեցողութեամբ և բարձր հոգեկան կուլտուրայում ուժեղ արպաւորութիւններ ստանալու ընդունակութեամբ։ Բանականութիւնը և դիտողութիւնը այսպիսով շատ բան ունէին անելու. պէտք է նախ նոր գրգիռներից շարունակ առաջ եկող հոսանքները ընդունէին. սկզբում այս հնարաւոր էր միայն խիստ լարուած լինելով և զգացումները շարունակ գործադրելով։ Ընդհանուր նեարդային դրութեան հիմքն է այս, որը հանդէս եկաւ և որը բաղմիցս ուղղակի հեռանդագին երևոյթների մէջ երևան է գալի. չէ՞ որ այն օրերում նեարդային հիւանդութիւնը իբրև առանձին տեսակի հիւանդութիւն նոր էր պարզաբանուել։ Նեարդային համակարգութեան ընդհանուր գործունէութեան ուժեղանալը և սրա համապատասխան հոգեկան էութեան փոփոխութիւնը, դիւրագրգիռ դառնալը մինչև այժմ էլ մնում է։

Այս փոխադարձ ազդեցութիւնից յետոյ ձեռք ձեռքի տուած զուգընթաց երևոյթ այս ուժեղ զրգռման դրութեան հետ առաջ է գնում նաև հոգեկան շարժող դրութեան թուլութիւնը. թեթև, բայց ոչ խորը կամքի զրգիռներ, ծգտումն զրգիռներից հաճոյք ստանալ. իզուր ծգտումն զրգիռների մէջ հաւասարակշռութիւն պահելու. սրանք այնպէս արագ միմեանց յաջորդում են, որ նրանց մէջ հոգեկան անդորրութիւն, հնուց այնպէս տենչանքով ծգտման առարկայ եղող aequitas animi-ին, այժմ շատ քիչ դէպքերում կարելի է լինում ունենալ։

Եղել են ու կան մասամբ դրութիւններ, որոնք կեանքի ամեն շրջանում յատկապէս ձեռնարկողների դասում, այս կապակցութեան առաջ եկան, նոր զարգացած հասարակութեան շրջաններում ամենից լաւ կարելի է ուսումնասիրել։ Ինչպիսի է սակայն ձեռնարկողների դասակարգը, վերջին բուրժուազիայի սոցիալական ու քաղաքական տեսակէտից յաճախ առաջնորդող դասակարգը, նորագոյն դիւրագրգռութեան այդ տիպիկ ներկայացուցիչը։ Ինչպէս տնտեսական մեծ ճգնաժամերին ցոյց տուեց իւր շուտով յուսահատուիլը, զրաւիչ տնտեսական կեանքի ժամանակ իւր վճռականութեան պատրաստականութիւնը։ Ինչպէս անզուսպ է նա իւր զուարճական կեանքում, երբ օրուայ տպաւորութիւնների տակ փնտրում է խաղտող գոյների ու ձևերի ժողովածու տուն կամ նորագոյն թատրոն ու համերգի դահլիճ, տեսական լարող անցքեր ներկայացնող հիպնոսելու համար։

Ձեռնարկողների ծառայող, բանուոր դասակարգը կրեց նոյն տեսակի, թէև փոփոխուած, հոգեկան տպաւորութիւններ. թէ ո՞ր աստիճանի՝ երևում է այն բանից, որ աշխատանք առաջարկողների և սրանց մէջ հոգեկան առանձին ձևեր, օրինակ երաշխիքը, զարգանում են։ Մի՞թէ մնացած դասակարգերը այս նորագոյն հոգեկան դիւրագրգռման դրութիւնից ազատ են մնացել։ Նոյն իսկ գիւղացիների վերաբերմամբ այս բանը չի կարելի բացարձակօրէն հաստատել, քանի որ փոխանակ դռների վրայ կաւճով հաշիւներ անելու ունին մի մեծ հաշուէմատեան, կարդում են արժէթղթերի մասին եղած յայտարարութիւնները,

ուր մնաց արհեստաւորները, որոնք գործարանի արդիւնաբերութեան արագութեան մի մասը իրենց էին դրաւել։ Իսկ մատուորականները. հէնց սրանց շրջանում դիւրագրգռութիւնը աճում է հոգեպէս նուրբ և միաժամանակ հիւանդագին աւերիչ ձևերով։

Այս դիւրագրգռութիւնը մի նոր բան է. սա սոցիալ-հոգեկան աններդաշնակութեան մի ձև է, որ առաջներում չկար. անձնականութեան, զգայնութեան և ռոմանտիզմի առաջին շրջանի աններդաշնակ ձևերը չնայելով իրենց ընթացքի տիպիկ նմանութեանը, ներքուստ սրանից տարբեր են։ Նորագոյն սոցիալ-հոգեբանական անհատական ամենանուրբ և գրաւիչ խնդիրներից է երկուստեք ունեցած պատմական նիւթերի ընդարձակ համեմատութեամբ որոշել երկուսի մէջ եղած մինչև իսկ ամենափոքր տարբերութիւնը։

Մինչդեռ անչափ մեծ նոր գրգիռների ապաւորութիւնների ազդեցութեան տակ խիստ որոշ նոր հոգեկան դրութիւն առաջ եկաւ, իր հերթին սա էլ բնականաբար ազդեց նոր կուլտուրական տարրեր առաջ գալուն։ Այս ժամանակը նորագոյն հոգեկան կեանքի անցումն է, եթէ ի նկատի ունենանք անձնականութեան առաջին շրջանի հոգեկան կեանքի վերջին երևոյթները, վերջին դարի 30-ականից մինչև 60 ական թուականների բնական և հոգեկան գիտութիւնների իրական ուղղութիւնը, Հեգելից յետոյ եղած փիլիսոփայութիւնը տարածողներին, այլև Ռուբէնսի և Ռեմբրանդտի նկարչութեան երանդաւորումը, քրնարերգութիւնը, ուսուցչապետների ռոմանը և ֆեյէտոնիստական ոճը, բանաստեղծութեան մէջ Պաուլ Լինդաուի թատրոնը։ Ամենից առաջ երևակայութեան գործունէութեան մէջ սա անցումն է դէպի աղաս լոյսի գործածութիւնը նկարչութեան մէջ և դէպի իմպրէսսիոնիզմը (ուժեղ տպաւորութիւններ առաջ բերող ուղղութիւն)։

70-ական թուականներից սկսած այս շարժումները հաստատ, պարզ և վճռական, ապա յեղափոխական և վերջապէս 80-ական թուականներին յաղթական ճանապարհով հաստատուում են գերմանական հողի վրայ։ Մի նոր նատուրալիզմի ժամանակ է սկսուում, որը նախ աշխարհի զուտ արտաքին երևոյթ-

ների մէջ դանում է նոր գծեր, նոր կողմեր և նոր արժէքներ. Լիբերմանի և Ուիդէի ժամանակն է. մի նիւթառատ և մինչև այժմ կեանքը այնպէս ճիշտ չնկարող բանաստեղծի ժամանակ է, ինչպիսին է Լիլիենկրոնը, որը 1870 թուի կռուի միակ երգիչն է. նատուրալիստական ռոմանի և ամենից առաջ մանրամասն էսկիզների ժամանակ է։ Այն ոգևորութիւնը, որով արտայայտւում էին նախ արտաքին աշխարհի անմիջական տպաւորութիւններ, նոյն ոգևորութեամբ գիմում են հոգեկան, ներքին կեանքին։ Ֆիզիոլոգիական իմպրէսսիոնիզմի հետ 80-ական թուականների վերջին առաջ է գալի և մասամբ սրան քայքայում մի նոր հոգեբանական արուեստ։ Այժմ նկարչութեան մէջ սկսում են պարզ տպաւորութիւնների արդիւնք եղող արժէքները առանց շրջագծերի նկարել. այժմ սկսում են պատմուածքներում և դրամայում, մինչև այժմ գիտակցութեան մէջ չմտած, բնական զէպքերը ուղղակի նկարագրել կամ թէ լսողների լարուած առաջ բերող զգացումները դրգռելով ստիպել, որ իրենք վերարտադրեն այդ. սկսում է ամենաքաղաքավարի զրգիռները տուող քնարերգութիւնը։ Բանաստեղծի ամեն մի տպաւորութեան համար տրած նկարը կրում է աւելի յատուկ և բաղմօրինակ զրգիռների տարօրինակ անցումներ, շշուփելիքի գունաւոր տպաւորութիւններ, հնչող հաշակ, ախորժալի խօսքեր։ Ազատ լոյսի կատարեալ զարգացման նատուրալիզմի ժամանակն է, լայն վրձինի շարժումներով նկարչութեան նաև ամենաբարձր ձևերին հասնող քնարերգութիւն։ Հօֆմանստալի և Ստեփան Գէորգի, Սկարբինայի և Կիւհլի ծաղկման ժամանակն է։

Ինչպէս երևակայութիւնը, այնպէս և գիտութիւնը ենթարկւում է նոր հոգեկան գրութեանը։ Մինչև այժմ անծանօթ լարուած նեարդերով սկսում են դիտողութիւններ անել բնագէտը և հոգեբանը. պատմաբանը խորասուզւում է եղակիի զարգացման և անհատական կեանքի խորքերում, ծգտում է նուրբ անհատական-հոգեբանութեան բնութագրութեան տէրը դառնալ։ Այժմ գեղարուեստական նատուրալիզմին ամենից մօտ է լինում գործագրական գիտութիւնը, թէև ինչպէս Ֆրանսիայում, Գերմանիայում կատարեալ միութեան չի հասնում. գեր-

մանական կուլտուրան չունի Տէն, մի պատմաբան-արուեստագէտ petits douments-ի, չունի Զոլա, որի համար վէպը կատարելապէս oeuvre scientifigue և ժողովածու documents humains-ի պիտի լինի։

Մինչդեռ այսպիսով երևակայութիւնը և բանականութիւնը հիմք ունենալով գրգիռները՝ գործում են, զարգանում է նաև զգացմունքի ու կամքի կեանքը, հիմք ունենալով նոյն բանը։ Այն հանգամանքը, որ յիշողութիւնը նոր գրգիռների ահագին գումարը չէր կարողանում կանոնաւորել, պատճառ եղաւ կենդանի զգացմունքի շարժուելուն. գանգատւում էին ընդհանրապէս յիշողութեան ոյժի թուլանալու և նոր սերնդի յիշողութիւնը ծանրաբեռնելուն համար։ Մարդ շարունակ գրգռուած դրութեան մէջ էր և այս դրութիւնը նոր նեարդային գրգիռների դրութեան հետ ընդհանրապէս սերտ միանում էր։

Այսպիսով առանձին անձնաւորութիւնների մէջ ծագեց ոչ խորը խանդավառումը. գրգռման դրութիւնները ըստինքեան դառնում են երջանիկ դրութիւններ։ Սրանք ուժեղ տպաւորութիւններ առաջ բերող գեղարուեստի ու գիտութեան ազատ զարգացման հիմք դարձան և հասկանալի է թէ ինչպէս էին վերջիններս նրանց բնութագրում և շահագործում։ Դժգունացումն մինչև անկարելիութեան աստիճան, օբիեկտիվ անդիտակից լինելութիւն, ահա նրանց նշանաբանը. փնտրում էին գունաւոր արուեստաւորումների քնքոյշ գործադրութիւն, հնչիւնների փոքրագոյն աններդաշնակութեան անորոշ վայելումն, ճարտարապետութեան և կահաւորման մէջ մեղմաղմուկ, խօսակցութեան մէջ հիպնոսող լռութիւն։ Սրանց հետ միասին, իբր հակադրութիւն, որոնում էին երաժշտութեան մէջ ականջ խլացնող աղմուկ, փողոցի կեանքում անասելի աններդաշնակ շարժում, դէմքի ծամածռութիւններ, խիստ հնչիւններ, գործնական ժողովներ լի ճարպիկ օրակարգի թղթերով, որոնց նպատակն է գոհացումն տալ նիւթական պահանջներին. մի պայքար ու ոյժի քաղաքագիտութիւն ամեն տեղ ու ամեն անկիւնում. զուարճութեան յղփացման աստիճան։

Pessimist

(Կը շարունակուի)

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

«Ի»-ի ԵՒ «Վ»-ի ՏԵԽՆԻԿԱՆ

Տարեսոյս յունուար ամսից Թիֆլիսում սկսուեց հրատարակուել մի նոր ամսագիր «Արօր» անունով, որի մէջ պ. Ս. Մալխասեանցը մի առաջարկ է անում՝— թողնել «ու»-ի հին գործածութեան ձևը, չհետևել «ւ»-ի նորամուտ գործածութեան ձևին, այլ երկուսի փոխարէն գործ դնել «վ» տառը անխտիր ամեն տեղ, բացի այն տեղերից, ուր «ւ» տառը անհրաժեշտ է ու և իւ հնչիւնը պահպանելու համար։

Այդ նոր ուղղագրութեամբ «և»-ը գրւում է «եվ», «տիւ»-ը գրւում է «տիվ», «տեսաւ»-ը «տեսավ», «բաւական»ը՝ «բավական» և այլն։ Ուրեմն բառերի կազմութեան ձևը հիմնովին փոխւում է։ Բայց դորա մասին չէ որ մենք ուզում ենք խօսել այստեղ։ Մենք կկամենայինք ընթերցողի ու բանասէրի ուշադրութիւնը հրաւիրել մի հանգամանքի վրայ, որի մասին գուցէ չէ մտածել նոր ուղղագրութեան հեղինակը և որ, ըստ մեզ, պակաս էական նշանակութիւն չունի դրելու տեսակէտից։

Ցայտնի է, որ ներկայ դարի դիտութեան նպատակն է մարդկային կենցաղավարութեան ամեն խոչընդոտները և առապարները հարթել և դիւրացնել որքան կարելի է շատ. կեանքի ամեն ասպարէզներում այդ ուղղութիւնը գերիշխող դեր է ստանձնել. ֆիզիքական ոյժին և ձեռքի աշխատանքին փոխարինում է մեքենական աշխատանքը. այս բոլորը նորա համար, որպէսզի մարդկային յօրինուածքը, որ առանց այն էլ մեծ չափով մաւոր և ֆիզիքական սպառում ունի, ինչքան կարելի է քիչ եռանդ, էներգիա վատնէ և աւելորդ աշխատանքների չափը կարճէ։

Գրութիւնն էլ ֆիզիքական աշխատանքների թուին է պատկանում և այն էլ բաւականին ոյժ սպառող աշխատանքի։ Մեր

տառերի գրելու էլեկտրիկան ինքնին արդէն ապացոյց է, որ ժողովուրդը հետզհետէ աշխատել է թեթևացնել գրելու եղանակը, աւելորդ աշխատանքը կարճել և գրող մարդուն ազատել գրութեան տաժանակիր աշխատանք պահանջող սեղից ու ձեռից։ Երկաթագիրը, այնուհետև՝ աւելի հեշտ գրուող բոլորգիրը, ապա աւելի պարզ ձևը՝ նոտրգիրը, և ի վերջոյ ԺԹ. դարում ամերիկեան գրութեան մեքենան, որի տարածման վրայ այնքան աշխատեց հանգ. բանասէր Մ. Միանսարեանցը, այս բոլորը միայն մի բան են ապացուցանում, որ մարդկութիւնը աշխատել է դեռ հնում թեթևացնել մարմնի ֆիզիքական աշխատանքը և աւելի քիչ չարչարանքով ձեռք բերել ցանկացած գրքերը։

Բայց մարդկութիւնը ի. դարում աւելի ևս առաջ գնաց այդ ասպարիզում. նա աշխատեց նոյն իսկ բոլորովին ազատել ձեռքը գրելու աշխատանքից և նորան տալ մեքենական գործունէութիւն, շատ փոքր մաս թողնելով ձեռքին, նեպ.դերին և մկաններին։ Այդ նպատակով հնարուեց սղագրութիւնը, որ մարդ թէ արագ խօսողի գրածը կարողանայ արձանագրել և թէ միևնոյն ժամանակ խնայէ մարդուս մկանների ու ջղերի շատ գրելուց առաջացրած յաճախակի կծկումներն ու ցնցումները, որոնք վերջի վերջոյ իրանց ծանր ազդեցութիւնն են անում մարդու սրտի և ուղեղի վրայ։

Այս ուղղութեամբ են մտածում և գործում շատերը և աշխատում նորանոր դիւրութիւններ յարմարացնել թէ գրելու արհեստի և թէ նոյն իսկ տպագրութեան մէջ։ Մինչև անգամ մտածողներ կան, որ տպած գիրն էլ որքան հնար է սղուի և այնքան ճապաղ տեղ չբռնէ, ինչպէս որ այժմս է, որով թեթևութիւն լինի ինչպէս աչքի և ձեռքի, այնպէս էլ խնայողութիւն տպագրական ծախքերի համար։ Պ. Ս. Լիսիցեանի նախաձեռնութեամբ մենք պատրաստեցինք մինչև անգամ մի տեսակ նշան ա տառի փոխարէն, որ երեք անգամ պակաս տեղ բռնելով տպած թղթի վրայ և երեք անգամ էլ պակաս էներգիա պահանջելով գրելու ժամանակ՝ մեծ թեթևութիւն պիտի պատճառէ շտրունակ գրողներին և առհասարակ գիրք տպողներին։ Այդ նշանը ուղղահայեաց մի գիծ է (ı)՝ ա-ի երեք գր-

ժիկներից մէկը, որ նոյնպէս իւր պատմութիւնն ունի։ Այդ նշանով գրուածքի եօթերորդ մասը պակասում է, ինչպէս ցոյց է տալիս այս օրինակը.

> Դրան աւագանին վճռել էր գահ բարձրացնել ոչ թէ ատելի Յազկերտի զաւակներից մէկին, այլ նորա հեռաւոր ազգականներից ընտրել թագաւոր։
>
> Դրն ուգնին վճռել էր գահ բարձրցնել ոչ թէ ատելի Յազկերտի զաւկներից մէկին, այլ հեռաւոր ազգկններից ընտրել թագաւոր։

Մենք չենք ասում թէ այս նորածևութիւնը անշուշտ կ'ընդունուի ամեն գրագէտների կողմից, բայց, յիշատակելով այս հանգամանքը, ցանկացանք ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրել այն բանի վերայ, որ տեխնիքական յարմարութիւնները մեր գրագէտները թողել են վերջին պլանի վերայ և նորանոր դժուարութիւններ են ստեղծում, փոխանակ միշտ դէպի թեթևը, տանելին և պարզը առաջնորդելու։

Այժմ ասենք, թէ ինչու մենք գտնում ենք, որ Ս. Մաշտոցեանի առաջարկը մեր յիշած դրութեան հակապատկերն է ներկայացնում և փոխանակ պարզելու մեր գրութեան ձևը՝ աւելի դժուարացնում է այն։

Յայտնի է, որ մատների ծայրերում գտնուում են նեարդային մաղածև թելեր, որոնց միջոցով և կից մկաններով կատարուում է ամեն մի շարժում գրելու ժամանակ. այդ շարժողութիւնները հաղորդուում են ուղեղին և ազդում են նաև սրտի վերայ. որքան շատ անգամ շարժուին մատները, այնքան աւելի շուտ են յոգնում նոքա։ Ուրեմն ցանկալի է, որ այդ շարժումների թիւը որքան կարելի է քիչ լինի։

Յայտնի է նոյնպէս, որ ւ տառը գրելու համար մենք պէտք է երկու շարժում կատարենք, այն է՝ մի անգամ մէջտեղից ներքև հիմնական գիծ անցկացնենք և մի անգամ էլ ներքևից վերև՝ նորա շարունակութիւնը կազմող մաղային գիծը գրենք. իսկ վ տառը գրելու համար մենք այդ երկու փոքրիկ գծիկների վե-

բայ պէտք է աւելացնենք դարձեալ երկու՝ ւ տառից ճիշտ երկու անգամ աւելի երկար գծեր*), մէկը վերևից մինչև ներքև՝ հիմնական գիծ անցկացնելու և մի անգամ էլ ներքևից վերև՝ մաղաւոր գիծը գրելու։ Ուրեմն ւ տառը գրելը երեք անգամ պակաս աշխատանք է պահանջում՝ քան վ տառ գրելը։ Եւ որովհետև գրուածքի մէջ ամենից շատ գործածուող տառերից մէկը ւ տառն է, ապա ուրեմն ւ-ը վ-ի փոխելով՝ գրելու աշխատանքն էլ ըստ այնմ աւելանում է։

Մենք հաշուեցինք, որ 100 երեսանոց մի գրքի մէջ միջին թուով 4000 այնպիսի ւ կայ, որ, ըստ Մալխասեանի, վ-ի պէտք է փոխուի, ուրեմն 100 երես գրելիս այդ նոր եղանակով պէտք է 8000 աւելորդ կրկնագիծ (հիմնական և մաղաւոր) գրել, որ պահանջում է առնուազն 6 ժամ ժամանակ։

Ի՞նչ օգուտ պիտի ստանայ գրող մարդը ւ-ի տեղ վ գործածելուց՝ առ այժմ դեռ մութն է այդ. իսկ բոլորովին պարզ է, որ նա այդ նորաթուխ մեթոդով ամեն մի 100 երես գրելու համար պիտի կորցնէ աւելորդ 6 ժամ ժամանակ և 8000 անգամ աւելի պիտի շարժուին նորա նեարդային հիւսուածներն ու մկանները, որ մարդկային էներգիայի միանգամայն աւելորդ կորուստ է։

Դիւ ա. ք. Աղաբեանց

---

*) ւ գրւում է մէջ տեղի երկու տողերի մէջ, իսկ վ-ի հիմնական գիծը ամբողջ 4 տողերի վերայ, և նորա մաղաւոր գիծը ներքև երկուի տողի վրայ. ուրեմն վ տառը իւր հասակով ճիշտ երկու անգամ մեծ է ւ տառից։

ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑՈՒՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Կ. Պոլսի հայ լրագիրները հաղորդում են, որ Պոլսի պատրիարքարանը կազմում է եպիսկոպոսանալու վարդապետների անուանացուցակը։ Այդ խնդիրը մեծ իրարանցում է առաջ բերել Կ. Պոլսի լրագիրների մէջ, որոնցից «Կավոշ» ծաղրաթերթը «օրօրոցային եպիսկոպոսցուներ» վերնագրով խիստ զաւեշտական յօդուած է զետեղել, իսկ «Բիւզանդիոն»-ի մէջ տպուած է Արշ. Ալպոյաճեանի «Եպիսկոպոսացման հապճէպ» վերնագրով առաջնորդող յօդուածը, ուր ամենախիստ կերպով դատապարտում է Պոլսի պատրիարքարանը, որ «ծիծաղելի փութկոտութեամբ և տարօրինակ անտարբերութեամբ» սկսել է եպիսկոպոսական ցանկի մէջ մտցնել երիտասարդ և դեռ թեմերում չծառայած կամ անուանարկուած վարդապետներին, իսկ անուշադրութեան մատնել երկար տարիների անբիծ և անձնուրաց ծառայութեամբ վաղուց արդէն արժանաւոր համարուածներին։

Յայտնի է, որ եպիսկոպոսը մեծ քահանայ է, առանց որևէ տարբերութեան քահանայի կոչումից, միմիայն նորա պաշտօնը հովուական է. եպիսկոպոսութիւնը առհասարակ թեմականների իրաւունքն է համարուել, թէպէտ պատմութիւնը մեզ բազմաթիւ օրինակներ է տուել, որ թեմական լինելու իրաւունքը միմիայն եպիսկոպոսներին չէ պատկանում, այլ առհասարակ թէ մեծ և թէ պարզ քահանաներին։ Եւ ոչ այսչափ միայն, այլ առաքելական կանոնը նոյն իսկ պատուիրում է, որ քահանայապետ և գլխաւոր նշանակեն քահանաներից ընտրեալներին և անարատներին.

«Կարգեցին առաքեալք և եդին հաստատութեամբ, եթէ 'ի կարգէ քահանայութեան ընտրեալքն, անարատքն և որ սուրբ ի մամոնայէ իցեն, օրինաց և կարգի եկեղեցւոյ հմուտք, եթէ և յանարգաց ոք իցէ, 'ի քահանայապետութիւն և 'ի գլխաւորութիւն կացուսցեն» (Առաք. Ի. Ի.)։

Սոյ բ. ժողովի կանոնները ուղղակի հրամայում են, որ եպիսկոպոս պէտք է ձեռնադրել անպատճառ գիտնական մարդ և թեմի կամքով և ոչ թէ որևէ պատրիարքարանի ցանկութեամբ,

որ կարող է հիմնուած լինել զանազան անձնական և այլ հաշիւների վերայ։

«Այսուհետև արժանաւորքն միայն և գիտունքն առցեն զաստիճան եպիսկոպոսութեան, մեծաւ քննութեամբ և վկայութեամբ, և ՅԵմին կամակցութեամբ առանց կաշառաց, հասակաւ մի պակաս քան ղերեսուն ամն»։ (Սսոյ Բ. ժող.ա. ա.)։

Այս կանոններից պարզ երևում է, որ եպիսկոպոս ձեռնադրելու համար նախ և առաջ հարկաւոր է մեծ գիտութիւն և պատրաստութիւն, արժանաւոր վարքի հետ, և ապա երկարամեայ ծառայութիւն թեմի ժողովրդեան, որի կամակցութիւնը կամ բարի վկայութիւնը պահանջւում է եպիսկոպոս ձեռնադրուելու համար։

Բայց Կ. Պոլսի պատրիարքարանը ներկայումս կազմել է եպիսկոպոսցուների մի ցուցակ, որոնք, ըստ «Բիւզանդիոն»-ի, մեծ մասամբ չունին եկեղեցական օրէնքներով գծուած պայմաններից մէկը կամ միւսը և ուրեմն դեռ շատ վաղ է նոցա եպիսկոպոսացումը։

Կազմուած ցուցակի եպիսկոպոսցուներից միակ վարդապետը Գնէլ Գալէմքարեանն է, որ երբեմն Մշոյ առաջնորդ է եղած և բարուք պաշտօնավարութեամբ, բայց նա էլ այժմ կրօնական ժողովի անդամ լինելով՝ ոչ մի իրաւական ընծայագիր չունի եպիսկոպոս ձեռնադրուելու։ «Դուռի կամ պատուհանի վրայ ձեռնադրուելու քաշքշուք դրութեամբ իր եպիսկոպոսացումն իրեն ալ պատուաբեր չի կրնար ըլլալ» ասում է «Բիւզանդիոնը»։

Երկրորդ եպիսկոպոսացուն որոշուել է՝ պատր. փոխանորդ Ղևոնդ Ծ. Վ. Դուրեանը, որ բացի այն, որ ոչինչ առանձին նպաստող հանգամանքներ չունի եպիսկոպոսացման համար, ընդհակառակը այնպիսի պարագաներ կան, որոնք ուղղակի արգելք են նրա եպիսկոպոսանալուն։ Նախ նա անփորձ երիտասարդ է, որի անփորձութեան թարմ օրինակները դեռ չեն մոռացուել տաճկահայերի յիշողութիւնից։ Դաղթականների անունով 6—7000 ոսկիների (6—70,000 ռ.) բաշխում կատարուեց պատրիարքարանի մէջ ազատութեան յաջորդող առաջին օրերում Ղևոնդ վարդապետի և գաղթականաց յանձնաժողով անունով մի մարմնի ձեռքով, որի հաշիւը մինչև այժմ չկայ։ Ասում են այդ գումարից հազիւ 2000 ոսկի է բաժանուել գաղթականներին, մնացեալ 4000 ոսկին (40,000 ռ.) կորել է կամ անյայտ է թէ ինչպէս է բաժանուել, մի գաղտնիք, որ կարող է լուծել Ղևոնդ վարդապետը, բայց կատարեալ լռութիւն է պահում։

Սեբաստիոյ առաջնորդը հրաժարուել է և հրաժարուածին ոչ

մի թեմ եպիսկոպոսութեան վկայական չի տայ, բայց մտել է եպիսկոպոսցուների ցուցակի մէջ. նոյնպէս անկանոնութիւն։

Կարինի առաջնորդը իր աթոռի վրայ հանգիստ չէ և ուզում է Շապինգարահիսար վերադառնալ. որ թեմը պէտք է եպիսկոպոսական վկայական տայ. յայտնի չէ։

Դիարբէքիրի և Անկիւրիայի առաջնորդները մի քանի ամիս է միայն պաշտօնի են մտել, դեռ թեմը կարգին նոցա երեսը չէ տեսել և պատրիարքարանը նոցա մտցնելով եպիսկոպոսցուների ցուցակի մէջ՝ հարկադրում է թեմերին եպիսկոպոսութեան վկայականներ տալ նոցա, որոնց դեռ չի էլ ճանաչում կարգին։

Արմաշի վանահայրութիւնը պարզ վանահայրութիւն է և ոչ թէ հովուական պաշտօնէութիւն, մինչդեռ այնտեղի վանահայրը մտել է ցուցակի մէջ։

Գրիգորիս վարդապետ Պալաքեանը նոր է ընտրուել Ռումանիայի և Բուլղարիայի առաջնորդ, դեռ պաշտօնի չէ մտել, գուցէ շատ արժանաւոր, մենք չգիտենք, սակայն անպաշտօն, չծառայած և շատ երիտասարդ, պէտք էր ուրիշն սպասել, որ նա պաշտօնի մէջ իւր արժանիքները գործով արդիւնաւորէ և ապա եպիսկոպոսանայ։ Սակայն մտել է ցանկի մէջ։

Միայն Երուսաղէմի պատր. տեղապահն է, որ 'ի պաշտօնէ իրաւունք ունի եպիսկոպոս ձեռնադրուելու։

Կարծեօք բոլոր յիշած վարդապետները իբրև պատգամաւոր վերջին կաթողիկոսական ընտրութեան եկած էին Էջմիածին։

Այս ցանկը, ասում է յօդուածագիրը, մի անգամ ևս «դրժբաղտաբար գալիս է հաստատելու ժողովրդի այլևայլ խաւերի մէջ տարածուած այն կրոյցը, թէ պատրիարքարանի արդի վարչական և մատակարարական գործերի մէջ տիրապետող ոգին վերին աստիճանի թոյլ է և զանազան ազդեցութիւններ, ազգականականն ու բարեկամականն էլ հետը, դեր կկատարեն հոն»։

Ազգականութիւն և բարեկամութիւն... շատ ծանր խոհեր են թելադրում այս երկու բառերը մեզ. ուր ներկայումս և որ ասպարիզի մէջ դեր չեն կատարում այս երկու պարագաները. բայց ուր և դեր խաղային դոքա, յամենայն դէպս երբէք դեր պիտի չխաղային այնտեղ, ուր եկեղեցական բոլոր կանոնները խստիւ արգելում են եպիսկոպոսի և առհասարակ հոգևորականի ընտրութեան ժամանակ առաջնորդուել ոչ բարեկամութեամբ, ոչ ազգականութեամբ և ոչ մամոնայով։

Մանաւանդ մեծ զգուշութիւն է հարկաւոր գործ դնել եպիսկոպոսացուի ընտրութեան խնդրում, որովհետև հայոց ներկայ կեանքում եպիսկոպոսը ամեն ինչ է, նորա անձնաւորութիւնից կախում

ունին դպրոցական բոլոր գործերը, նա է ուղղութիւն տալիս ուրեմն աճող սերնդի դաստիարակութեան. չնայելով որ նա նոյնպիսի մի քահանայ է, ինչ որ ամեն մի քահանայ, բայց նա ըստ օրինի տէր է հանդիսանում բոլոր քահանաների և առհասարակ հոգևորականութեան վրայ և նա է կազմակերպում հոգևորականութիւնն ըստ իր քմահաճոյքի և ցանկութեան. տէրութիւնների աչքում մի եպիսկոպոս, ինչքան էլ սա տգէտ, կաշառակեր և ամեն պակասութիւններով ապականուած մէկը լինի, շատ աւելի մեծ կշիռ ունի, քան հազար կրթուած ու արժանաւոր քահանայ։ Նոյն իսկ մեր ժողովրդի աչքում եպիսկոպոսը մի խոշորութիւն է, իսկ քահանան մի նուաստութիւն, մի «տէրտէր», որի մասին ամեն ինչ կարելի է ասել, իսկ եպիսկոպոսին պարտաւոր է մեծարել, լինի նա արժանաւոր այդ պատուի թէ ոչ, եւ այդ արտայայտում է նա ամեն կերպ. վերցրէք հէնց վարձատրութեան ձևը. միևնոյն աշխատանքի համար ժողովուրդը քահանային վճարում է 3 ռուբլի, իսկ եպիսկոպոսին 300 ռուբլի, թէպէտև շատ լաւ գիտէ, որ այսպիսի խոշոր գումարները ոչ մի բանի չպիտի ծառայեն։

Տեսնում էք ուրեմն, թէ ինչ բան է եպիսկոպոսը։ Մի մեծութիւն թէ պետութեան, թէ եկեղեցու և թէ ժողովրդի աչքում։ Եթէ այս այսպէս է, ապա ուրեմն որքան մեծ ընտրութիւն և զգուշութիւն պէտք է գործ դնուի եպիսկոպոսացուի ընտրութեան ժամանակ, մանաւանդ որ այդ կոչումը ցմահ է և չէ փոփոխւում։

Զայրանալ պէտք է ուրեմն, որ Կ. Պոլսի պատրիարքարանը այսպիսի թեթևամտութեամբ է մօտենում այդ ծանրակշիռ խնդրին և ոչ պահանջուած խորագիտութեամբ. բարեկամական և ազգականական հաշիւներով և ոչ՝ օրինապահանջ անաչառութեամբ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Խմբագրութեանս մէջ ստացուել են մի քանի յօդուածներ Թիֆլիսի վանքի եկեղեցու քահանաների միաբանական դրամարկղից կատարած փոխառութեան, Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան անհոգութեամբ կորստի մատնուած Բաստրմաճեանի կտակաւանդեալ գումարի, Թեմիս ս. առաջնորդի նախագահութեամբ գոյութիւն ունեցող նպաստամատոյց յանձնաժողովի 50,000 ռուբլի գումարի կասկածելի վիճակի և մի քանի այլ դրամական խնդիրների մասին։

Այդ յօդուածները, մի քանի հանգամանքների պատճառով, չկարողացանք զետեղել այս համարում, այլ մնացին առաջիկային։ Բայց չենք կարող մի երկու խօսք չասել յիշեալ յօդուածների մէջ արտայայտուած մի քանի մտքերի առթիւ։

Յօդուածագիրները ընդհանրապէս բողոքում են, թէ ինչո՞ւ մենք չենք մասնակցում ընդհանուր վիճաբանութեան և չենք բողոքում, որ այս և այն մասնաժողովներ իրանց ձեռքն ունենալով հասարակական ահագին գումարներ՝ զլանում են նոյն իսկ կարգին հաշիւ տալ հասարակութեան և գէթ ցոյց տալ, թէ որ հաստատութիւնների մէջ են պահւում իրանց գանձերը, կամ ինչո՞ւ չենք բողոքում, որ Կովկասի հայոց բարեգործական ընկերութիւնը իր անփութութեամբ կորցնելով կտակաւանդած ահագին գումար՝ զեռ նրանց ղեկավարները հասարակութեան յարգանքն ու համակրութիւնն են վայելում։

Որովհետև այդ խնդիրները նոր լուսաբանութիւններով են հանդէս գալիս յիշեալ յօդուածների մէջ՝ ուստի և մենք կթողնենք, որ յօդուածները իրանք խօսեն հասարակութեան հետ։

Այդ յօդուածների մէջ յիշւում է մի բան, որ իբր հոգևոր իշխանութիւնը զեկուցել է կառավարութեան, թէ քահանաները զիղծում են գործել (!!???), մի քանի հարիւր ռուբլիներ իրանց դրամարկղից պարտք վերցնելով, որի կէսն արդէն վճարուած է։ Իրաւ շատ հետաքրքրական լուր է այս։

Ասենք մի կողմից մենք չենք էլ զարմանում որ այդպէս լինի. մեր հոգևոր իշխանութեան համար ոչխարի գլուխն ու քահանայի գլուխը մէկ է. լինի նա բազմամեայ ծառայած ազգային հաստատութիւններին, եկեղեցուն և մայր Աթոռին անձնուիրութեամբ և նիւթական օժանդակութեամբ. բաւական է որ առաջնորդի մէկին այս ինչ քահանայի կերպարանքը հաճելի չլինի կամ իր պատկանած կուսակցութեան չյարի, մի չնչին պատճառ է պէտք նրան ոչնչացնելու։ Մեր ձեռքին գտնւում է Մագիստրոս Տ. Գաբրիէլ Պասկանեանցի եռահատոր ինքնակենսագրութիւնը, որի մէջ պէտք է կարդալ, թէ ինչ չնչին, անհիմն և նոյն իսկ ամօթալի պատճառներով Ներսէս Աշտարակցին քահանայութիւնից զրկեց, որ տարաւ հասցրեց նրան մինչև Վեատկա աքսոր։ Մենք երբէք չենք զարմանայ, եթէ նոյնը պատահի և այս լուսաւոր XX դարում։

Բայց խմբագրութիւնս, մի հարց ունի տալու յարգելի յօդուածագրին.—Եթէ քահանաներին իրանց դրամարկղից փոխառութիւն վերցնելու համար կարելի է իբրև զեղծարար ներկայացնել կառավարութեան, հապա ի՞նչ պիտի անուանել նպաստամատոյց Յանձնաժողովի ամբողջ կազմը, որը չէ պարզում հասարակու-

թեան, թէ ուր են պահւում նորա դրամարկղի մի քանի տասնեակ հազարները (կարծեաք 50,000 ռուբլին)։ Իսկ ինչ որ գաղանի է՝ նա միշտ կասկածի ենթակայ է։

ԼՈՒՐԵՐ

Նիւ-Եորկում կազմուել է հայասէր-ամերիկացիների ընկերութիւն Armenian Relit Assosiation անունով, որի նպատակն է օգնութեան հասնել Տաճկաստանի կարօտաւոր հայերին։ Ընկերութեան նախագահն է Նիւ-Եորկի եպիսկոպոս Taewid Krayr, առաջին փոխ-նախագահը Նիւ-Եորկի նահանգապետը։ Ընկերութիւնը կոչ է հրատարակել ամերիկայի ժողովրդին-օգնել կարիքից ու սովից ոչնչացող Թիւրքիայի հայերին։

Ինչպէս երևում է՝ Դաշնակցութեան գործի քննութիւնը ընդարձակ ծաւալ է ստանում. «Т. Л.» գրում են էջմիածնից, որ Նովոչերկասկի նահանգական դատարանի դատական քննիչ Լիժինի հաղորդագրութեամբ մարտի 18-ին էջմիածին են գնացել Երևանի նահանգական դատարանի կարևոր գործերի քննիչը և նոյն դատարանի դատախազը և պահանջել են Վեհ. Կաթողիկոսի դիւանից նայելու համար հանգ. կաթողիկոսի վերջին չորս տարուայ կոնդակները։ Քննիչը վերցրել է նաև ճեմարանի 1905—1906 թուերի ելումտից մատեանները։

Ամսոյս 23-ին Թիֆլիսում վախճանուեցաւ 90 տարեկան հասակում Լազարեան ճեմարանի հայկաբանութեան և պարսից լեզուի նախկին ուսուցիչ Ոսկան Յովհաննիսեանցը։ Հանգուցեալը յիսնական թուերին Մոսկուայում հրատարակեց մի շարք հայ պատմագիրներ—Կիրակոս, Սմբատ և Ստեփանոս Օրբելեան (ոչ ամբողջ պատմութիւնը), նոյնպէս և «Նոր քնար հայաստանի» անունով մի քանի պրակ աշուղների երգեր։ Երբ որ «Արձագանք» լրագրում մղուում էր մի մեծ բանակռիւ պրոֆ. Եղիազարեանի և պր. Գր. Խալաթեանի մէջ հանգ. պրոֆ. Մ. Էմինի թողած անտիպ գրաւոր աշխատութիւնների մասին, Ոսկան Յովհաննիսեանը հրապարակ եկաւ մի ընդարձակ յօդուածով այդ խնդրի վերաբերեալ։

Ամսոյս 28-ին վանքի եկեղեցում կարդացուեց Վեհ. Հայրապետի անդրանիկ օրհնութեան կոնդակը և այդ առիթով քա-

ղող խօսեց Թեմիս ս. Առաջնորդը՝ հրաւիրելով Ժողովրդին օգնութիւն հասնել Ազգային կարօտալներին։ Գովելի է սրբ. Առաջնորդի վառ սէրը դէպի կարօտեալ հայերը։ Եւ մենք մի առաջարկութիւն ունինք անելու այդ առթիւ։ Քանի որ Նպաստամատոյց Յանձնաժողովը գոյութիւն է առել հէնց այդպիսի կարօտեալներին օգնութիւն հասցնելու համար՝ աւելի լաւ կլինէր Յանձնաժողովի մօտ գտնուած խոշոր գումարը ամբողջութեամբ և օր առաջ ուղարկել կարօտեալների պէտքերը հոգալու համար։

Գրիգոր Նիկողոսեանը «Հովիւ»-ի 11-դ համարում գրում է՝ մի միջի այլոց այս նշանաւոր յայտնութիւնը, որի վրայ հրաւիրում ենք Ազգիս վեհ. Հայրապետի և Թեմիս ս. առաջնորդի խորին ուշադրութիւնը։ «Խիստ ծանր և ճնշող տպաւորութիւն գործեց Պ. Բուրգի հայ գաղութի առաջաւոր մարդկանց վրայ օտարադաւան հոգևոր գործերի դեպարտամենտին՝ վանքի ա. եկեղեցու միաբանութեան մասին արած անհիմն մատնութիւնը, որով կառավարութեան և հայ ազգի մէջ բանսարկուի և խառնակչի նսեմ դերը կատարողը հէնց իրանք հայ հոգևորականներն են»։ Այս յօդուածին խմբագրութիւնը ծանօթութեան մէջ աւելացրել է. «յարգ. յօդուածագիրը տալիս է մի քանի անձանց անուններ, որ մենք անյարմար ենք համարում առաջ բերել»։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Իմ «Մշակ»-ում և «Սուրհանդակ»-ում տուած բացատրութիւնից գոհ մնացին բոլոր բարեմիտ և լուրջ մարդիկ։ Այդ բացատրութիւնը, ինչպէս որ հարկն էր սպասել, գրգռել է սագերին, որոնք այժմ ծածկանուններով տակ թաք կացած վարագուրի ետեւից նորից խառնակում ու քրքրում են այդ խնդիրը, որպէս զի դրանով հասարակաց ուշադրութիւնը հեռացնեն խոշոր խոշոր զեղծումներից։

Ես իմ վերջին խօսքը ասել եմ թէ ս. Առաջնորդին և թէ մամուլին և իմ օրինական կերպով կատարած փոխառութիւնից մընացած մի քանի հարիւր ռուբլի պարտքս իմ ընկերներին՝ յանձն է առել վճարել մի յայտնի ֆիրմա, որով իմ հաշիւը գոցուած է վաղուց։ Իսկ եթէ զանազան ինտրիգաններ դեռ գոհ չեն իմ բացատրութիւնից, անշուշտ նորա մէջ տեսնելով իրանց ապականուած պատկերը, այդպիսիները կարող են դիմել դատարան, որին են-

թարկուում են օրէնքով բոլոր դրամական հաշիւների քննութիւնները, և ուր դատուել են անխտիր թէ քահանաներ և թէ նոցանից բարձր հոգևոր պաշտօնեաներ։

Դիւ. տ. Աղանեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Մոսկուա. Ա. Շ.—Սուքիաս արքեպիսկոպոսի ծախքով հրատարակուած «Ագաթանգեղոս» գրքի մասին Ձեր ուղած տեղեկութիւնները չենք կարող հաղորդել, որովհետև այդ գիրքը մենք աչքով էլ չենք տեսել և գաղափար չունենք նրա մասին։ Դիմեցէք Ս. Մալխասեանցին։

Բաղու.—Ա. Ց. Թերթիս խմբագրի յայտարարած գրքոյկը մի փոքր կուշանայ, որովհետև ընդարձակ ծաւալ ստացաւ։

Կարս.—Դ. Ձեր յօդուածի տպագրութիւնը յետաձգուեց, որովհետև յօդուածի մի մասը ուղարկել էիք մատիտով գրած և գրեթէ անընթեռնելի, իսկ տպարանի համար պէտք է պարզ գրելանպատճառ թանաքով և ցանկալի է՝ մի երեսի վրայ։ Յառաջաբանը Ձեզ յետ ուղարկեցինք, որ պարզագրէք։

Բաղու. մեր գործակալին. «Բագուի» բոլոր նոր բաժանորդներին ուղարկեցինք «Լումայ»-ի այս տարուայ բոլոր համարները։

Խմբագիր Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ

Շարունակւում է 1910 թ. բաժանորդագրութիւն

ԳՐԱԿԱՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ „ԼՈՅՍ“ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

«ԼՈՅՍԻ» ՆՊԱՏԱԿՆ Է՝ կապ հաստատել Նոր-Նախիջևանի, Հիւսիսային Կովկասի, Խրիմի և ընդհանրապէս Ռուսաստանում ցրուած հայ գաղութների միջև, մասնակից անելով նրանց ընդհանուր հայկական կեանքին։

«ԼՈՅՍԻ» ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ.—Ն. Նախիջևանի, Ռոստովի ու շրջակայ հայ գիւղերի համար տարեկան՝ 3 ր., կէս տարին՝ 2 ր., 3 ամիսը՝ 1 ր.։ Ռուսաստանի այլ տեղերի—տարեկան 4 ր., կէս տարին՝ 2 50 կ. և ամիսը 1 ր. 50 կոպ.։ Արտասահմանի համար—տարեկան՝ 6 ր. կէս տարին՝ 3 ր.։ Համարն ամեն տեղ արժէ 10 կոպ.։

Ընդունում են յայտարարութիւններ ձեռնտու պայմաններով բոլոր լեզուներով.—տողատեղին I երեսում 20 կ., վերջին երեսներում՝ 10 կոպ.։

Հասցէն Нахичеванъ на Дону, редакція армянскаго журнала „ЛУЙСЪ“ Խմբագիր-հրատարակիչ՝ Բժ. ԳԷՈՐԳ ՌԷԻԶԵԱՆ.

Открыта подписка на 1910 годъ

на большую ежедневную, литературную, политическую и общ. газету

IX годъ изданія **БАКУ** IX годъ изданія

Газета выходитъ въ объемѣ и по программѣ большихъ столичныхъ газетъ, подъ общею редакціей **Х. А. Вермишева**, при ближайшемъ участіи **Минаса Берберьяна, Г. Е. Старцева, [Ант.] С. Айвазова, Б. Г. Перлина** и др. постоянныхъ сотрудниковъ редакціи.

Кромѣ того газетѣ «Баку» обѣщали свое сотрудничество: **Ю. А. Веселовскій, Дагестани, Магистрантъ, Я. А. Манандянъ, кн. Г. М. Тумановъ, В. Ѳ. Тотомянцъ** и др.

Подписная цѣна съ доставкой и пересылкой

	ГОДЪ	6 МѢС.	1 МѢС.
Для иногородн.	8 р. 50 к:	6 руб.	1 р. 50 к.
Для городскихъ	7—	4—	1—

Заграницу 15 руб. на годъ и 8 р. на полъ года.

Адресъ Баку, редакція газета «Баку»

15-Դ ՏԱՐԻ

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1910 թուի

ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ

1910 թուին Լումայ լոյս կը տեսնի իւր այժմեան դիրքով, բաղկացած 64—80 երեսներից, մեր մշտական աշխատակիցների գործակցութեամբ։ Ինչպէս միշտ, հարկաւոր դէպքերում, կտրուն պատկերներ հասարակական երևոյթների առթիւ։

1910 թուի «ԼՈՒՄԱՅ»ի ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՈՂ բաժանորդները կստանան իբրև ՊՐԷՄԻԱ

ԵՂԻՇԷԻ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

աշխարհաբար նոր թարգմանութիւնը։

ԲԱԺԻՆԷԳԻՆՆ է տարեկան 6 ռ., *կէս տ.* 4 ռ.
Արտասահման „ 8 „ „ 5 „

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ, ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ, ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԵՒ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԼՈՒՄԱՅ»-Ի ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԻՆԷԳԻՆՆ է 4 ՌՈՒԲԼԻ

ԱՊԱՌԻԿ ՈՉ ՈՔԻ ՉԻ ՈՒՂԱՐԿՈՒԻ

Հասցէն Թիֆլիս Պոլիցէյսկայա 7. Tiflis Polizeiskaja, 7.